

2858

206.1

U-47

60

10302

206.1
Q-47

«Հանրային» հանրապետություն 29 SEP 2009

Հորհրդատվ. ԲԱ.ԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

7/08, Կ. Երևան

ԿԱԹՈՒՂՈՍԿՈՍԱԿԱՆ

280
715-ԲԱ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԿԱՆՈՆԵՆ



1064
81661

«Ողորմիմ քեզ եկեղեցի Հայաստանայց, խրթնացեալ ի բարեգարդութենէ բեմ-րին, ի քաջէն գրկեալ հովուէ և հովուակցէ. ոչ ևս տեսանեմ զբանաւոր քո հօտ ի վայրի դալարոջ և առ ջուրս հանգստեան տածեալս, և ոչ ի փարախ հաւաքեալ՝ զգուշանալով ի դալոց. այլ ցրուեալս անապատաց և զահալիժութեանց»:


ԽՈՐԵՆԱՑԻ.

ՎԱՂԱՐՇԱՊՍ

ԵՆԵՏԵՍԱՆՈՐԲ ՏՈՒՄԱՆ ՍՐԲՈՑ ԷՏՄԱԾՆԻ

1908

Տպագրում է ծախսով
ԽՈՐԷՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԼԱԶԱՐԵԱՆ



ԵՐԿՈՒ ԵՕՄԳ

Մինչև այժմ չկար մի գրքոյի որտեղ ամփոփուած լինէին կաթողիկոսական ընտրութեան վերաբերեալ բոլոր կանոնները: Այդ կարիքը զգալի լինելով այժմ՝ մենք կամեցանք ներկայ աշխատութեամբ լրացնել և միջոց տալ ընթերցողներին ծանօթանալու այդ բոլոր կանոններին առաջիկայ կաթողիկոսական ընտրութեան առթիւ:

Բացի այդ՝ գրքոյիս սկզբում մենք դրել ենք կարևոր տեղեկութիւններ Տեղակալ կարգելու, կաթողիկոսի ընտրութեան, պատգամաւորների և ընտրութեան իրաւունք ունեցող թեմերի մասին:

Որպէս զի օրէնքների հայերէն թարգմանութեան նկատմամբ թիւրիմացութիւն ծագած գէպքում ընթերցողներն միջոց ունենան անմիջապէս ստուգել ընագրով գիւրութեան համար դրել ենք և այդ օրէնքների սուսերէն բնագիրը:

Առ այժմ բաւականանում ենք կաթողիկոսական ընտրութեան և այլ յարակից ինդիքների վերաբերեալ սոյն համառօտ տեղեկութիւնները լոյս ածել, յուսալով ապագայում տալ աւելի ընդարձակ տեղեկութիւններ՝ պաշտօնական կարևոր գրագրութիւնների պատճէններով, որ այժմ հնար չունինք հրատարակելու:

ՅԱՐԳՆՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԶԱՒԵԱՆ
(Անդամ Սինդիկ)

ԿԱԹՈՒՂԻԿՈՍՍԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ե Ի

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

Տ Ե Ղ Ա Կ Ա Մ Լ Կ Ա Ր Գ Ե Լ Ը

Ս. Էջմիածնի ամենայն Հայոց Կաթողիկոսի մահից անմիջապէս յետոյ՝ նոյն օրը կամ յաջորդ օրը ս. Սինօղում կազմում են օրագիր Համաձայն Պօլօթենիայի 1148 յօդ. (հրատ. 1896 թ.) յանձնելու Սինօղի Ատենապետի տեղակալութիւնը նոյն Սինօղի աւագագոյն անդամին (ըստ ձեռնադրութեան) հետեւեալ «Հրամայեցին»-ով.

«Օրէնքի 1148 յօդուածի համեմատ Սինօղի անդամներից աւագագոյնին (անուն, ազգանուն) կարգել նոյն Սինօղի Ատենապետի տեղակալ, որ այդ պաշտօնի հետ վարէ նաև իւր անդամակցական պարտաւորութիւնը: Իսկ յատկապէս կաթողիկոսի իրաւունքին վերաբերեալ գործերը Սինօղում թողնել անկատար մինչև նոր Կաթողիկոսի ընտրութիւնն և հաստատութիւնը»

որի մասին տեղեկութիւն տալ Ռուսաստանի Հայոց Թեմական Ատենաներին և արտասահմանի Հայոց վիճակների Առաջնորդներին: Սոյն օրագրի քաղուածը տալ Սինոդի Ատենապետի տեղակալին ի տեղեկութիւն և ի կատարումն»:

Ս. Սինոդի սոյն վճիռն առանձին առանձին գրութեամբ յայտնուում է Ռուսաստանի Հայոց Թեմերի բոլոր Կոնսիստորիաներին, Կ. Պօլսի և Երուսաղէմի պատրիարքներին, Պարսկաստանի Հնդկաստանի և Ատրպատականի Առաջնորդներին, Կիլիկիոյ և Աղթամարի կաթողիկոսներին, Ամերիկայի և Եւրոպիոյ առաջնորդներին և իրեն կաթողիկոսական Տեղապահին ի գիտութիւն:

Բերում ենք այստեղ 1448-րդ յօդ. հայերէն Թարգմանութիւնն ու բնագիրն ամբողջութեամբ:

«Երբ Էջմիածնի Պատրիարքը Հայոց Լուսաւորչական Սինոդում բացակայ է, այն ժամանակ նրա փոխարէն Սինոդում նախագահութիւն է անում Սինոդի անդամ արքեպիսկոպոսներից կամ եպիսկոպոսներից աւագագոյնը: Նա օգտուում է նախագահի բոլոր իրաւունքներով միայն այն ժամանակ, երբ Պատրիարքը հիւանդութեան կամ Էջմիածնից բացակայ լինելու պատճառով չի կարողանում ներկայ գտնուել իսկ զուտ հողեւոր գործերը, որոնց համար Պատրիարքն ունի վճռական ձայն, ոչ մի դէպքում չեն կարող վճռուել առանց Պատրիարքի՝ պատ-

րիարքական աթոռը թափուր եղած ժամանակ այդ կարգի գործերի վճիռը յետաձգուում է մինչև նոր կաթողիկոսի հաստատութիւնը»:

«Когда Эчмиадзинский Патриархъ въ Армяно. Григоріанскомъ Синодѣ не присутствуетъ, то въ немъ предсѣдательствуетъ вмѣсто него, старшій изъ Архіепископовъ или Епископовъ, членовъ сего Синода. Онъ пользуется всѣми правами предсѣдателя въ такомъ только случаѣ, когда Патриархъ самъ не можетъ присутствовать по причинѣ болѣзни или отсутствія изъ Эчмиадзина; но дѣла чисто духовныя, по коимъ Патриархъ имѣетъ рѣшительный голосъ, ни въ какомъ случаѣ не могутъ быть рѣшаемы безъ Патриарха во время ваканціи Патриаршаго престола; рѣшеніе дѣлъ сего рода отлагается до назначенія новаго Патриарха».

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

ԸՆՏՐՈՒՅԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Կաթողիկոսի մահից անմիջապէս յետոյ Սինոդը կազմում է օրագիր՝ կարգադրութիւն անելով նոր կաթողիկոսի ընտրութեան վերաբերեալ, այս մասին ուղարկելով ծանուցողական հրովարտակներ*) Թէ Ռուսաստանի և Թէ արտասահմանի Թեմերը՝ նշանակելով մի տարի ժամա-

*) Ծանուցողակ. հրովարտակի պատճէնը սուս գրքոյկիս մէջ:

նակ, համաձայն Պօլօժենիայի 1118 և 1119 յօդուածների (հրատ. 1896), որտեղ ասուած է՝

1118 յօդ. «Էջմիածնի Ծայրագոյն Պատրիարքն ընտրուում է ամբողջ Հայոց ազգից— Լուսաւորչականներից, այս մասին սահմանուած կարգով».

1119 յօդ. «Երբ ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք կաթողիկոսի գահը թափուր է մնում, Հայոց Էջմիածնի Սինօզն ուղարկում է ծանուցողական հրովարտակներ թէ Ռուսաստանի և թէ նրա սահմաններից դուրս գտնուած Հայոց թեմերն և սահմանում է մի տարի ժամանակ նոր Պատրիարք ընտրելու համար»:

Սոյն 1119-րդ յօդուածի հիման վրայ Սինօզն առանց կառավարութեան կանխագոյն թոյլտուութիւնը խնդրելու պարտաւոր է կաթողիկոսի մահից անմիջապէս յետոյ նշանակել նոր կաթողիկոսի ընտրութիւնը՝ սահմանելով մի տարի ժամանակ: Խրիմեան կաթողիկոսի մահից յետոյ՝ երբ կամենում էին նշանակել կաթողիկոսական ընտրութիւն՝ յիշեալ յօդուածի մէջ սահմանուած մի տարի ժամանակի մասին տարբեր մարդիկ տարբեր բացատրութիւններ էին տալիս՝ կարծելով թէ ընտրութիւնը պէտք է կատարել կաթողիկոսի մահից յետոյ մինչև մի տարին կամ մի տարուայ ընթացքում: Երբ կամենան: Օրէնքի այդ յօդուածի յիշեալ մեկնութիւնը միանգամայն սխալ է՝ ի նկատի առնելով օրէնքի միտքն և՛ քերականական տեսակետից

և՛ թէ ըստ էութեան: Օրէնքը պարզ ասում է՝ որ կաթողիկոսական գահը թափուր մնալուց յետոյ՝ Սինօզն ուղարկում է թեմերը ծանուցողական հրովարտակներ՝ սահմանելով մի տարի ժամանակ կաթողիկոս ընտրելու համար: Օրինակ՝ եթէ Սինօզում Օդոստոսի 10-ին կազմում են օրագիր կաթողիկոսի ընտրութեան համար, պէտք է ընտրութեան օրը նշանակել հետևեալ տարին՝ ճիշտ Օդոստոսի 10-ին: Նշանակուած օրը սկսում է պատգամաւորների առաջին նիստը: Մէկ տարին պէտք է նշանակեն՝ հաշուելով ոչ թէ այն օրից՝ երբ կաթողիկոսը վախճանուել է, այլ այն օրից՝ երբ օրագրով որոշում են ընտրութեան ժամանակը, ուղարկելով թեմերը ծանուցողական հրովարտակներ: Այդ տեսակետից հէնց յիշեալ յօդուածի հիման վրայ Սինօզը՝ որպէս զի ժամանակ չբկորցնի՝ պարտաւոր է կաթողիկոսի մահից անմիջապէս յետոյ նշանակել ընտրութիւնը:

Այս անգամ Մկրտիչ կաթողիկոսի մահից յետոյ Սինօզը՝ ի նկատի առնելով կաթողիկոսական ընտրութիւնն արագացնելու պահանջը՝ իւր 15 նոյեմբերի 1907 թ. № 2507 հանձը՝ իւր 15 նոյեմբերի 1907 թ. № 2507 հրութեամբ զիմեց կովկասի Տ. Փոխարքային՝ խնդրելով թոյլտուութիւն՝ նշանակել ընտրութիւնը մի փոքր առաջ՝ այն է 1908 թ. Մայիսին, իւր 26 նոյեմբ. 1907 թ. № 25888 հրութեամբ յանուն Տեղապահ Գեորգ Աբրեպիսկոպոսի Սուրէնեանց՝ յայտնեց՝ որ ինքը

դժուարանում է ընթացք տալ Սինոդի յիշեալ միջնորդութեան՝ ի նկատի առնելով օրէնքի կրտսեան կերպով սահմանած մի տարի ժամանակը: Եւ մինչև Տ. Փոխարքայից Սինոդի միջնորդութեան պատասխան գալն որովհետև անցել էր մի քանի օր, ուստի Սինոդը սոյն 1907 թ. Դեկտեմբերի 7-ին օրագրով որոշելով նշանակել կաթողիկոսական ընտրութիւնը համաձայն օրինաց՝ սահմանեց ընտրութեան օրն ոչ թէ հետեւեալ 1908 թ. Դեկտ. 7-ին, այլ 30-ին Հոկտեմբերի, ի նկատի առնելով, որ կաթողիկոսը մեռնելուց անմիջապէս յետոյ հէնց երկրորդ օրը 30-ին Հոկտեմբերի պարտաւոր էր օրագիր կազմել կաթողիկոսական ընտրութիւնների համար՝ նշանակելով մի տարի ժամանակ՝ այն է հետեւեալ տարին՝ Հոկտեմբերի 30-րդ օրը: Օրէնքի սահմանած մի տարին ոչ միայն կարճացնելու այլ և երկարացնելու համար՝ Սինոդը պարտաւոր է ստանալ նախօրօք ԲԱՐՉՐԱԳՈՅՆ հաճութիւն՝ ինչպէս այդ եղել է Դէորդ Դ-ի մահից յետոյ, բայց ներկայ դէպքում՝ երբ Կովկասի Տ. Փոխարքան դժուարացել է ընթացք տալ Սինոդի միջնորդութեան՝ կարճացնելու ընտրութեան ժամանակը՝ անշուշտ մի կողմից ևս ի նկատի է ունեցել, որ այժմ օրէնքի փոփոխութիւնը կախուած է միայն Պետական Դումայից:

Այստեղ բերում ենք 1118 և 1119 յօդուածների բնագիրն ամբողջութեամբ.

1118. Эчмиадзинскій Верховный Патріархъ избирается всѣмъ Гайканскимъ народомъ Армяно-Григоріанскаго исповѣданія, по установленному для сего порядку.

1119. При упраздненіи мѣста Верховнаго Патріарха-Католикоса всѣхъ Армянъ, Армяно-Грегорианскій Эчмиадзинскій Синодъ посылаетъ извѣстительныя о томъ грамоты во всѣ какъ въ Россіи, такъ и внѣ предѣловъ ея находящіяся Армяно-Грегорианскія епархіи, и назначаетъ годичный срокъ для избранія новаго Патріарха.

Պատգամաւորներ

Համաձայն Պօլօթենիայի 1120 յօդուածի իւրաքանչիւր թեմ կաթողիկոս Պատրիարքի ընտրութեան համար տալիս է երկու պատգամաւոր՝ մէկը հոգևորական, միւսն աշխարհական: Առաջ ենք բերում այդ յօդուածն ամբողջութեամբ. «Իւրաքանչիւր թեմ Պատրիարքի ընտրութեան համար նշանակում է երկու պատգամաւոր՝ մէկը հոգևորական, միւսն աշխարհական: Հոգևորական պատգամաւորը պիտի լինի կամ ինքն Առաջնորդը, կամ նրա՝ հոգևորականների միջից նշանակած մի որ և է անձրկանների միջից նշանակած մեկըներից, աշխարհականն ընտրում է բոլոր մեկըներից, իւզբաշիններից և Հայոց եկեղեցու մնացած աշխարհական պատուաւոր անձինքներից, որոնք

Հայոց եկեղեցու հին սովորութեան համաձայն իրաւունք ունին ընտրելու»:

Պատգամաւորների ընտրութեան եղանակի մասին, որ փոփոխուած է, տեսնել սոյն գրքոյկիս մէջ նախկին Փոխարքայի կանոնները յօդ. 2, 3, 5:

Բացի թեմերի հոգևորական և աշխարհական պատգամաւորներից՝ Կաթողիկոսի ընտրութեան մասնակցում են Էջմիածնի Սինոդի բոլոր անդամներն և միաբանութեան Էջմիածնում գտնուած եօթն աւագագոյն (ըստ ձեռնադրութեան) անդամները համեմատ Պօլօթենիայի 1122 յօդուածի, որն առջ ենք բերում: «Բացի պատգամաւորներից Պատրիարքի ընտրութեան մասնակցում են Էջմիածնի Սինոդի բոլոր անդամներն և Էջմիածնում գտնուած 7 աւագ եպիսկոպոսներ: Իսկ եպիսկոպոսների պակասութեան դէպքում, թիւը լրանում է այնտեղի աւագագոյն վարդապետներով»:

1120. Каждая Армяно-Грегорианская епархія назначает для избранія Патріарха двухъ депутатовъ: духовнаго и свѣтскаго. Депутатъ духовный долженъ быть или самъ начальникъ епархіи, или тотъ, коего онъ для сего назначилъ изъ духовныхъ; свѣтскій избирается всѣми меликами, юзбашами и прочими почетными свѣтскими членами Армяно-Грегорианской Церкви, кои могутъ на то имѣть право по древнему сей Церкви обычаю.

1122. Сверхъ депутатовъ участвуютъ въ выборѣ Патріарха всѣ члены Эчмиадзинскаго Армяно-Грегорианскаго Синода и семь старшихъ изъ находящихся въ сіе время въ Эчмиадзинѣ Епископовъ. Въ случаѣ недостатка Епископовъ, сіе число пополняется Старшими тамошними Архимандритами.

Սինոդի օրագիրն ընտրութեան մասին

Վերևում ասացինք, որ Կաթողիկոսի մահից յետոյ Սինոդը կազմում է օրագիր նոր Կաթողիկոսի ընտրութեան համար: այստեղ բերում ենք 7 Գեկտեմբերի 1907 թ. Մհրտիչ Կաթողիկոսի մահից յետոյ Սինոդում կազմած օրագրի «Հրամայեցին»-ը:

«Վերև առջ բերուած քաղաքական օրէնքի 1118 և 1119 յօդուածների համաձայն (XI հատ. I մաս) Սինոդում պատրաստել ծանուցողական հրովարտական և ուղարկել Կ. Պօլսի Հայոց ամենապատիւ Պատրիարքին, Երուսաղէմի Հայոց ամենապատիւ Պատրիարքին և Գերաշնորհ Կաթողիկոսին Ցանն Կիլիկիոյ և Կաթողիկոսական Տեղապահին Աղթամարայ, Ռուսաստանի, Տաճկաստանի, Ատրպատականի և Պարսկաստանի—Հնդկաստանի Հայոց վիճակների Սրբազան Առաջնորդներին նոր Հայրապետի ընտրութեան համար՝ նշանակելով Ժամանակը 30 Հոկտեմբերի 1908 թ. այդ ծանուցողական հրովարտական ուղարկել Կովկասի Տ. Փոխարքայի Գիւլանը ցուցա-

կով հանդերձ հասուցանելու առ Նոցին Գերապատուութիւնն, իսկ Ռուսաստանի Վիճակաւոր Առաջնորդների անունով ծանուցողական հրովարտակներն ուղարկել նրանց ուղղակի Սինօզից»:

Այս մտքով առանձին զբուռմ է կովկասի Փոխարքայի Գիւանը, խնդրելով պարտ ու պատշաճ կարգադրութիւն կաթողիկոսական ընտրութեան ծանուցողական հրովարտակներն ուղարկելու Տաճկաստանի Հայոց թեմերի Առաջնորդներին և Պատրիարքներին՝ Պօլսի Պատրիարքի միջոցով, իսկ Պարսկաստանի թեմերինն իրենց դեսպանի միջոցով, միևնոյն ժամանակ իմաց է տրուում առանձին զբուռթեամբ Կ. Պօլսի Պատրիարքին, Ատրպատականի և Պարսկաստանի—Հնդկաստանի Հայոց Առաջնորդներին՝ որ ծանուցողական հրովարտակներ կրստանան Արտաքին գործոց նախարարի միջոցով և նշանակուած է ընտրութեան ժամանակը 1908 թ. Հոկտեմբերի 30-ին, որպէս զի մինչև ծանուցողական հրովարտակներ ստանալն իրենք պատրաստութիւն տեսնեն՝ կամ թիւրիմացութեամբ չստանալու դէպքում ժամանակին յայտնեն Սինօզին: Այդպիսի դէպք պատահել էր թաւրիզի Առաջնորդին ուղարկուած ծանուցողական հրովարտակի նկատմամբ, որ չնայած Մայիսին էր ուղարկուած, բայց Օգոստոսի 13-ին մօտ 3 1/2 ամսից յետոյ այն ժամանակուայ (1891 թ.) Առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարեանցը զբուռմ է Սինօզին, որ դեռ չէ

ատացել ընտրութեան ծանուցողական հրովարտակը:

Թ Ե Մ Ե Ր Ի Թ Ի Ի Ը

Ընտրութեան ծանուցողական հրովարտակներ Սինօզից ուղարկուում են 6 հատ Ռուսաստանի Թեմակալ Առաջնորդներին անմիջապէս, իսկ 66 հատը կովկասի Բարձրագոյն իշխանութեան, Ներքին և Արտաքին գործոց նախարարութեանց միջոցով արտասահմանի Հայոց Պատրիարքներին և Թեմերի Առաջնորդներին, որոնցից 44-ը Պօլսի Պատրիարքին, մէկը իրեն՝ իսկ 43-ը իւր ստորադրեալ թեմերին, 5-ը Երուսաղեմի Պատրիարքին, 13-ը Կիլիկիոյ կաթողիկոսին, 2-ը Աղթամարի, 2-ն էլ Պարսկաստանի Առաջնորդներին*):

1891 թուի Հոկտեմբ. 25-ին 9879 թուահամարով կովկասի Կառավարչապետի Գիւանը տեղեկութիւն է տալիս Սինօզին՝ յայտնելով Ներքին գործոց նախարարի զբուռթեան բովանդակութիւնը՝ նախ յիշեցնելով 1884 թ. Մարտի 13-ին Բարձրագոյնս արուած ցուցումների մասին Կաթողիկոսի ընտրութեան կարգի առթիւ, որի մա-

*) Ծանուց. հրովարտակը զբուռմ է թեմերի Առաջնորդներին անունով, որ կաթ. ընտրութեան ներկայացուցիչ լինի մէկ ինքն առաջնորդը, և միւսն թեմից ընտրուած աշխարհական պատգամաւորը:

սին գրուած է Սինօզին Կառավարչապետի կողմից նոյն տարուայ 23 Մարտի թիւ 2913 գրութեամբ և երկրորդ յայտնելով, որ ստացուած 66 ծանուցողական հրովարտականներէն ուղարկուած է Արտաքին գործոց նախարարի միջոցով միայն 49-ը, որից 44 Պօլսի Պատրիարքին՝ մէկը իւր, իսկ 43-ը իրեն ստորագրեալ թեմերին, իսկ մնացեալ հինգը Երուսաղէմի Պատրիարքին, Աղթամարի և Սոյ Կաթողիկոսներին, եթէ վերջինս չի հրատարակի մասնակցելու, ինչպէս նա արել է 1883 թուին (յիշատակում է Ներքին գործոց նախարարը) և Պարսկաստանի երկու Առաջնորդներին: Ներքին գործոց նախարարարի այդ կարգադրութիւնը, որ ուղարկում է միայն 49 ծանուցողի, բղխում է այն կարգադրութիւնից, որ արուած է նախկին Ներքին գործոց նախարարի կողմից, որի մասին Կովկասի նախկին Կառավարչապետը տեղեկութիւն է տալիս Սինօզին իւր 1-ն Փետրուարի 1884 թ. № 889 գրութեամբ՝ ուղարկելով այդ վիճակների ցուցակը, որի մէջ նշանակուած են 47, միւս երկուսը Պարսկաստանի թեմերն են: 47-ից 44-ը են Պօլսի Պատրիարքի և իւր ստորագրեալ 43 թեմերը, իսկ 3-ն Երուսաղէմի Պատրիարքի, Սսի ու Աղթամարի կաթողիկոսներ:

Նախկին Ներքին գործոց նախարարի յիշեալ կարգադրութիւնից երևում է, որ չէ ընդունում ոչ Երուսաղէմի, ոչ Սսի և ոչ էլ Աղթամարի ստորագրեալ թեմերը, այլ միայն իրենց



ներկայացուցիչ Պատրիարքներին, այն էլ բացատրելով թէ ինչու Պատրիարքի ու նորա ստորագրեալ թեմերը ուղարկելով ծանուցողներ Տաճկաստան 47 հատ և Պարսկաստան 2 հատ, միևնոյն ժամանակ յայտնելով, որ Կաթողիկոսի ընտրութեան ժամանակ կարող են ներկայ լինել կամ գրաւոր իրենց ձայնը տալ միայն այն վիճակի ներկայացուցիչները, ուր ուղարկուած են ծանուցողական հրովարտականք: Այսպիսով ուրեմն Սինօզի ենթադրուած 66 արտասահմանի թեմերը դառնում են 49:

Յիշեալ պաշտօնական կտրական կարգադրութիւններն ի նկատի առնելով՝ Սինօզը իրիմեանի մահից յետոյ որոշեց ուղարկել արտասահմանի Հայոց թեմերն 49 ծանուց. հրովարտակի, որից 47 Տաճկաստան, իսկ 2-ն Պարսկաստան, որովհետեւ Գէորգ և Մակար կաթողիկոսների մահից յետոյ Սինօզը չնայած որ ճանաչել է արտասահմանի 66 թեմերն և ուղարկել ծանուց. հրովարտակի բայց երկու անգամ էլ կառավարութիւնը ճանաչել է միայն 49 թեմ ընտրութեան իրաւունք ունեցող և նրանց է ուղարկել ծանուց. հրովարտակները՝ պահելով մնացեալ 17-ը:

Բացի վերև յիշատակուած Ռուսաստանի և արտասահմանի Հայոց թեմերից հանդուցեալ երջանկայիշատակ Մկրտիչ Կաթողիկոս իրիմեանի օրօք աւերացան նաև Երուսաղիմի և Ամենիկայի Հայոց երկու Առաջնորդութիւնները, որոնց ևս կուղարկուի ծանուցողական հրովար-

1004
81661

Handwritten signature or note in blue ink, possibly reading 'Կրտիչ'.

տակներ ըստ նախօրօք թոյլտուութեան Ռուսաց նախարարութեան: Որովհետև մինչև այժմ այդ երկու թեմերը Ռուսաց կառավարութեան կողմից զեռ չեն ճանաչուած՝ կաթուղւ ընտրութեան ծանուց. հրովարտակներ ուղարկելու նըկատմամբ, ուստի 1907 թ. Դեկտ. 7 զրութեամբ Սինօղը Կովկասի Փոխարքայի միջոցով զիմեց Կառավարութեան պատշաճ թոյլտուութիւնը ստանալու՝ որ այդ երկու թեմերն ևս իրաւունք ունենան մասնակցելու կաթուղիկոսական առաջիկայ ընտրութեան:

Այսպիսով ուրեմն առաջիկայ կաթուղիկոսական ընտրութեան պէտք է մասնակցեն արտասահմանի 49 և Ռուսաստանի 6 թեմերը, ընդամենայն 55 թեմ: Դիտենք որ իւրաքանչիւր թեմ պէտք է տայ մի հոգևորական և մի աշխարհական պատգամաւոր կամ 2 ձայն, ուրեմն 55 թեմը 110 ձայն, աւելացնելով Սինօղի ներկայ անդամների 5 ձայնը ու միաբանութեան աւագագոյն (ըստ ձեռնադրութեան) անդամների 7 ձայնը՝ պէտք է լինի ընտրութեան իրաւունք ունեցող ձայն 122: Իսկ եթէ թոյլատրուի Եւրոպայի և Ամերիկայի երկու թեմերի մասնակցութիւնը՝ կը լինի 126 ձայն: Սոյն 126 ձայնից 24-ը Ռուսաստանի հայերի ձայնն է, որից 18-ը հոգևորականի, իսկ 6-ը աշխարհականի. իսկ մնացեալ 102 ձայնն է արտասահմանի հայերի, որից կէսը հոգևորականի և կէսն աշխարհականի:

Յ Ո Ւ Ց Ա Կ

Ռուսասանի եւ արսասահմանի Հայոց թեմերի.

1. Նոր-Նախիջևան և Բեսսարաբիա
2. Աստրախան
3. Տփլիս
4. Ղարաբաղ
5. Շամախի
6. Երևան

Պատրիարքութիւն Կ. Պօլսոյ *)

1. Կ. Պօլիս
2. Թէքլիրզաղ. Ռոդոսթոյ
3. Ազրիանուպօլիս
4. Վառնայ
5. Մօլդօփալաբիա
6. Տրապիզօն
7. Ճանիկ
8. Շապրն-Ղարահիսար (Նիկօպօլ)
9. Թամզարա և Ածալտեր
10. Ամասիա և Մարզուան
11. Եւզոկիա (Թօլատ)
12. Սերաստիա—Սվազ
13. Կարին (Արզրում)
14. Վան
15. Լիմ և Կտուց անապատք

*) Տաճկաստանի թեմերի անունների ուղղագրութիւնը համեմատ է 1866 թ. Պօլոս պատր. ուղարկած ցուցակի:

16. Բասէն (Հասան Ղալայ)
17. Պայազիտ
18. Մուշ
19. Քղի (Առինջ)
20. Բաղէշ (Բիթլիս)
21. Դերձան
22. Բաբերդ (Բայբուրթ)
23. Երզնկայ
24. Շնկուշ
25. Բալու
26. Չարսանճաք
27. Խարբերդ
28. Խուլէ վանք և Չմշկածագ
29. Արապկեր
30. Ակըն (Էկիմ)
31. Քէմախ
32. Արզնի
33. Կեսարիա
34. Տիգրանակերտ (Դիարբեքիը)
35. Քրդաստան
36. Եղեսիա (Ուրֆայ)
37. Պաղզատ
38. Գալաթիա (Էնզիւրիա)
39. Զմիւռնիա (Իզմիր)
40. Եգիպտոս և Կրետէ
41. Պանտրմն
42. Կուտինայ
43. Պրուսայ
44. Նիկոմիդիա (Իզմիր)

Պասիարբոթն Երուսաղէմի.

45. Երուսաղէմ
46. Յօպպէ (Եաֆա)
47. Դամասկոս
48. Պէրութ
49. Կիպրոս (Կղզի)

Կաթուղ. Կիլիկիոյ

50. Յիս
51. Ադանա
52. Բերիա (Հալէպ)
53. Այնթափ
54. Հաճըն
55. Մարաշ
56. Զէյթուն
57. Անտիոք և Պէլէն
58. Եօզղաթ
59. Կիւրին
60. Տիւրիկ (Տաւրիկ)
61. Մալաթիա և Պէհէսնի
62. Տարէնտէ

Կաթուղ. Ադրամարի

63. Աղթամար
64. Կարկար

Պարսկաստան

65. Պարսկա-Հնդկաստան
66. Ատրպատական

Սսի Մկրտիչ կաթուղիկոսի հրաժարուիլը ամենայն Հայոց բնդհանրական կաթուղիկոսի ընտրութեան մասնակցելուց.

Վերև յիշատակուած կովկասի նախկին կառավարչապետի Դիւանի Հոկտ. 25 1891 թ. № 9879 և կառավարչապետի 23 Մարտի 1884 թ. № 2913 գրութիւններէց ի միջի այլոց երևում է, որ Սսի Մկրտիչ կաթուղիկոսը չէ կամեցել էջմիածնի ամենայն Հայոց Մակար կաթուղիկոսի մահից յետոյ էլ մասնակցել ընդհանուր կաթուղիկոսի ընտրութեան, ինչպէս և հրատարուել է Դէորդ Դ-ի մահից յետոյ նշանակուած կաթուղիկոսական ընտրութեան մասնակցելուց, երբ Կ. Պօլսի Ներսէս Պատրիարք Վարժապետեանը 1884 թ. Յունվարի 1-ին թ. 190 գրութեամբ Տաճկաստանի Հայոց վիճակաւորների հետ հրաւիրում է Սսի Մկրտիչ կաթուղիկոսին և նրա վիճակաւորներին էլ մասնակցելու Ս. էջմիածնի ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեանը:

Սսի Մկրտիչ կաթուղիկոսի մահով (14 Նոյեմբ. 1894) վերջացան երկու կաթուղիկոսներէ մէջ ծագած անախորժ վնասակար խնդիրները*): Այժմ Սսի կաթուղիկոսական դահլի վրայ նըս-

*) Սսի Մկրտիչ կաթ. մասին տես Յուսիկ արքեպիսկ. «Հայրապետական Աթոռի մասին» գրքոյկը՝ Վարչապատ, 1891:

տած է Տ. Սահակ կաթուղիկոս խապայեան, որ հէնց իւր օժման օրը ս. պատարազին յիշատակել է Ս. էջմիածնի ամենայն Հայոց Մկրտիչ կաթուղիկոս Խրիմեանին և իւր խոհեմութեամբ ճանաչել Նորան իբրև ընդհանուր Հայոց եկեղեցու Պետ: Ուրեմն առաջիկայ կաթուղիկոսական ընտրութեան ժամանակ Սսի կաթուղիկոսն էլ կը մասնակցի:

Բայց ինչպէս կարգում ենք Նոր-Նախիջևանում հրատարակուող «Մեր ձայնը» թերթի առաջին համարում, նորից Սսի կաթուղիկոսը յարուցանում է այնպիսի խնդիրներ, որոնք միայն վնասակար կարող են լինել Հայոց եկեղեցու շահերի նկատմամբ: Հայրապետական Դիղեցու շահերի նկատմամբ: Հայրապետական Դիղեցու կնքուած լինելով կաթուղիկոսի մահուան պատճառով անկարող եղանք Դիւանում ստացուած պաշտօնական գրութիւններէց ստուգել յիշեալ թերթի մէջ բերուած խնդիրները՝ որ և բերում ենք նոյնութեամբ:

«Խապայեան Տ. Սահակ եպիսկոպոսը Սսի կաթուղիկոս ընտրուելով Ս. էջմիածնի և Կիլիկիայի (Սսի) կաթուղիկոսների յարաբերութեան խնդիրը բաւարար կերպով հարթուած էր համարում: Ներկայումս այդ խնդիրը նորից է յարուցուել՝ Կիլիկիայի Տ. Սահակ կաթուղիկոսը զիմել է Կ. Պօլսի Հայոց Պատրիարքին և առաջարկութիւններ է արել—ա) որ իր ձեռնադրած եպիսկոպոսները ճանաչուին Ս. էջմիածնի կողմից և նրա իրաւասութեան տակ

գտնուած թեմերում իրաւունք ունենան պաշ-
տօն վարելու. բ) ս. միւռոնի օրհնութիւն կա-
տարելու համար ոչ մի հրահանգի սպասելու
կարիք չունի. գ) երբ որ իր թեմերում յիշա-
տակում է Էջմիածնի կաթողիկոսի անունը,
Էջմիածնի թեմերումն էլ պէտք է յիշատակել
(պատարագի ժամանակ) Կիլիկիայի կաթողի-
կոսի անունը՝ Էջմիածնի կաթողիկոսի անունից
յետոյ. դ) իրեն «Ամենապատիւ» տիտղոսով չը-
պէտք է դիմէ Կ. Պօլսի Պատրիարքը կամ ազգ.
Կեդրոնական ժողովը. այդ տիտղոսը պէտք է վե-
րապահել միմիայն Կ. Պօլսի և Երուսաղէմի պատ-
րիարքների համար. իրեն պէտք է տրուի կա-
թողիկոսական տիտղոս. ե) իրեն իրաւունք է
համարում թեմերի գործերի վերաբերմամբ ան-
միջական յարաբերութիւն սկսել կառավարու-
թեան հետ»:

ՊԱՏՃԷՆ ԾԱՆՈՒՅՈՂԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ

ԽՆԳԱԼ Ի ՏԷՐ

Սրբազնագոյն Հայրապետն մեր և Կաթո-
ղիկոսն ամենայն Հայոց Տ. Տ. ՄԿԻՏԻՉ Ա. յետ
հնգետասանամեայ Հայրապետութեան անքննելի
կամօքն Աստուծոյ փոխեցաւ յաստեացս ի 29
Հոկտեմբեր ամսոյ այսր 1907 ամի՝ թողլով թա-
փուր զԱթոռ Կաթողիկոսութեան ազգիս և զՄիա-
բանական Աւխտ Սրբոյ Աթոռոյս ի վիշտս տրրտ-
մու թեան:

Ծանուցեալ զայս գոյժ սգաւիթ Ձերումդ
..... և Ձեօք համօրէն հողե-
ւորական դասու և բարեպաշտօն հայազգեաց
Տիրախնամ քաղաքաց և զիւզօրէից վիճակիդ՝
Սինօդս Սրբոյ Էջմիածնի հրաւիրէ զՁերդ
..... և զՄիաբանական Աւխտ Սրբոյ
Եկեղեցւոյ Ձերոյ՝ ուղղել զՋերմաղին մաղթանս
առ Քահանայապետն յաւիտենից Քրիստոս
հանգուցանել ի լոյս երեսաց իւրոց զհօգի բարե-
յիշատակ Հայրապետին մերոյ և զժեզ—զորբացեալ
զաւակունս Մօրն լուսոյ Սրբոյ Կաթողիկէ
Էջմիածնի՝ մսիթարեալ պահպանել օժանդակու-
թեամբ և շնորհօք Ամենազօր Սուրբ Հոգւոյն:
Հնազանդեալ կամաց Ամենախնամ Արարչին՝
յետ ամիոփելոյ Միաբանութեան Աթոռոյս

ի հող տապանի զնշխարս հողելոյս Հայրապետին՝
 և զկնի հողալոյ զարժանն զեղանակէ անսայ-
 թաք առաջընթացութեան ներքին և արտաքին
 մասանց կառավարութեան Սրբոյ Վանիցս՝ և
 առաջի ունելով աչաց, զի ընտրութիւն նորոյ
 Պատրիարք Կաթողիկոսի ըստ զօրութեան ԲՍԲԶ-
 ԲԱԳՈՅՆ հաստատեալ կանոնադրութեան պարտի
 լինել ի լրանալ միոյ ամի յօրէ մահուան Հայ-
 րապետին, Սինօզս Սրբոյ Էջմիածնի տնօրինեաց
 հասուցանել ի զխտութիւն Չերդ

..... և Քրիստոսասէր ժողովրդոց յան-
 ձըն եղելոց Չերում հովուական խնամատարու-
 թեան, և յանձն առնել Չեզ ի ձեռն քաղաքա-
 կան իշխանութեան տեղւոյդ հրաւիրել զհայազգի
 ժողովրդականս ըստ սահմանեալ կանոնաց՝ առան-
 ձին իմն ազգասիրական եռանդեամբ, հոգևով
 մխիթարութեան, բարեպաշտութեան և սիրոյ՝
 ընտրել ի միջոյ իւրեանց զպատգամաւոր մի
 իբրև ներկայացուցիչ իւրեանց, և զկնի ընտրու-
 թեանն հրաւիրել զնա՝ զընտրեալ պատգամաւորն
 զալ այսր ի Սուրբ Էջմիածին ընդ Չերումդ

..... որ էք ներկայացուցիչ համայն
 հոգևորական դասու վիճակիդ, և ներկայ գտա-
 նել աստ ի Մայր Աթոռս յ30-րդ օր հոկտեմբեր
 ամսոյ առաջիկայ 1908 ամի՝ առ ի ընտրել ի հա-
 մայն հոգևորականաց Ազգիս ճիշդ պահպանու-
 թեամբ ծիսից և սովորութեանց սահմանելոց առ
 այս ըստ օրինի՝ զարժանաւոր յաջորդ Սրբոյ
 Հօրն մերոյ Կրիզոստի Լուսաւորչի, ի կառավարել

զեկեղեցին Քրիստոսի և զՀայրապետական թա-
 փուր մնացեալ Աթոռ Կաթողիկոսութեանն ամե-
 նայն Հայոց, որպէս զի ընտրեալ զլուին Սրբոյ
 Եկեղեցւոյ մերոյ վարեսցէ զՀայրապետական իշ-
 խանութիւնն յամենայնի ըստ անստերիւր Աւե-
 տարանական վարդապետութեան և կանոնաց
 Սրբոց Հարց ի պարճանս լրութեան Ազգիս և ի
 պայճառութիւն Եկեղեցւոյ մերոյ Սրբոյ: Եւ
 եթէ հանդիպիցիք արդեւանաց անձամբ ներկայ
 գտանել ի Սուրբ Էջմիածին ի ժամադրեալն ա-
 ւուր, յայնժամ բարեհաճեսցիք առաքել ի ժա-
 մանակին զներկայացուցիչ Չեր զընտրեալն ի Չէնջ:
 Իսկ եթէ ըստ անակնունելի իմիք հանգամա-
 նաց և դիպուածոց ոչ յաջողեսցի ոչ հոգևոր
 ներկայացուցիչ..... Չերոյ և ոչ

աշխարհական պատգամաւորին ընտրելոյ ի բարե-
 պաշտ հայազգեաց վիճակիդ անձամբ գտանել
 աստ ի Սուրբ Էջմիածին ի ժամ ընտրութեան
 ի նշանակեալն աւուր, յայնժամ ունիք Գուք և
 աշխարհական պատգամաւորն իրաւունս յայտ-
 նելոյ զկարծիս Չեր և զորոշումն առ այն՝ թէ զո՞
 ոք յեկեղեցականաց գտանէք արժանաւոր այնմիկ
 վեհաստիճան Հայրապետական իշխանութեան,
 առաջարկել կանխաւ Սինօզիս զբաւոր, զի մի՞
 արդեցի ընտրութիւնն ի նշանակեալն աւուր:

Ի վերջ բանիցս Սինօզս Սրբոյ Էջմիածնի
 հանդերձ Ուխտիւ Միաբանութեան Սրբոյ Աթո-
 ոյս՝ միջնորդութեամբ ամենայն Սրբութեանց
 հանգուցելոց ի տաճարիս, ամենաջերմեռանդն

աղօթիւք առ Աստուած հայցէ վասն համայն սգաղցեաց հոգեորականաց և բարեպաշտօն ժողովրդականաց հայազնէից մեծաց և փոքունց բնակելոց ի վիճակիդ զերկար կեանս, զյաջողութիւն ամենայն բարենպատակ գործոց և զբարգաւաճութիւն ամենայն առաքինական ձեռնարկութեանց, պահպանելով զամենեւեան զնոսաբնդ հովանեաւ ամենազօր Աջոյն իւրոյ անվնաս յամենայն երևելի և աներևոյթ թշնամեաց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. Ամէն:

Տեղակալ Ասեճապետի Սինոդի Գեորգ արհեպիսկոպոս

Անգլաճ Սինոդի

Արիստակէս արքեպիսկոպոս
Յովհաննէս արքեպիսկոպոս
Յուսիկ վարդապետ
Բարդուղէմ վարդապետ

Կովկասի նախկին Փոխարեայի հրահանգութիւնը.

Նորին Կ. Բարձրութիւն Կովկասի Փոխարեայի կարգադրութիւնը էջմիածնի Մայրագոյն Պատրիարքի ընտրութեան մասնակցող աշխարհական պատգամաւորների մասին՝ 1865 թ. Գեղատեմբերի 29, համար 81: Եջմարեբական Անդրկովկասի նահանգապետներին և Հայոց թեմական Առաջնորդներին:.

Հայ-Լուսաւորչական դաւանութեան հոգեւոր գործերի կառավարութեան համար սահմանուած կարգադրութեամբ (ԺԱ. հատ. մաս. Կ. Գլուխ 2. յօդ. 1120 և 1122) որոշուած է, որ ամենայն Հայոց Պատրիարք կաթողիկոսի ընտրութեան մասնակցեն Հայոց Լուսաւորչական Սինոդի բոլոր անդամները և նոյն ժամանակ էջմիածնում զտնուող եօթն աւագագոյն եպիսկոպոս (եպիսկոպոսների քիչութեան դէպքում՝ այդ թիւը լրանում է այնտեղի աւագագոյն վարդապետներից), թեմակալ առաջնորդները, կամ նրանք, որոնց սրանք այս բանի համար հոգեորականներից կը նշանակեն, և բացի դրանից աշխարհական պատգամաւորներ, որոնք ընտրուում են ամեն մի թեմից մի մի հոգի:

Աշխարհական պատգամաւորներին ընտրութեան վերաբերմամբ նոյն Պօլոժենիայում (յօդ.

1120) որոշուած է, որ նրանք ընտրուած են բոլոր մելիքներէից, իւզբաշիններէից և Հայոց եկեղեցու մնացած պատուաւոր աշխարհական անդամներէից, որոնք Հայոց եկեղեցու նախնական սովորութեան համաձայն այդ իրաւունքը վայելում են: Ի նկատի առնելով էջմիածնի Ծայրագոյն Պատրիարքի առաջիկայ ընտրութիւնը, ցանկանալով Անդրկովկասի հայ հասարակութեան հնարաւորութիւն տալ բոլորովին կանոնաւոր և օրէնքներին համապատասխան ընտրութիւն կատարել աշխարհական պատգամաւորների վերաբերմամբ, որոնք իրաւունք ունին մասնակցելու այսպիսի կարևոր գործում և կամենալով նախազգուշացնել այն անկանոն շեղումներէից, որոնք տեղի են ունեցել նախորդ ընտրութիւնների ժամանակ, ես հարկաւոր եմ համարում որոշել հետեւեալ կանոնները ի հրահանգութիւն:

1. Անդրկովկասի Հայոց թեմի ամեն մի առաջնորդ, երբ ստանում է էջմիածնի Սինօղի ծանուցողական հրովարտակն ամենայն Հայոց Պատրիարքի ընտրութեան համար, յայտնում է այդ մասին իւր թեմի նահանգապետին մէկ աշխարհական պատգամաւոր ընտրելու նկատմամբ անելիք կարգադրութիւնների համար, որը (պատգամաւորը) պիտի մասնակցի ամենայն Հայոց Պատրիարքի ընտրութեանը:

2. Թեմակալ առաջնորդներն իրանց սահմաններում հիմնուելով թեմերի բաժանման

վրայ, որը սահմանուած է հայ-լուսաւորչական եկեղեցու կառավարութեան համար նշանակուած Պօլօժէնիայում (ԹԱ. հ. ա. մ. ՔԼ. Գ. 107. 1162—1168) ցոյց է տալիս այն գաւառները և գաւառակները, որոնց մէջ հաստատուած են հոգեւոր կառավարութիւններ և գործակալութիւններ և որոնց մէջ Հայոց եկեղեցու անդամները՝ այս և որոնց մէջ Հայոց եկեղեցու անդամները՝ այս եկեղեցու նախնական սովորութեան համաձայն իրաւունք ունին մասնակցիլ աշխարհական պատգամաւորի ընտրութեան, պարտաւոր են ընտրել իրանց միջից ներկայացուցիչներ:

3. Թեմակալ առաջնորդից այդպիսի ծանուցում ստանալուց յետոյ, նահանգապետն անում է պատշաճաւոր կարգադրութիւն յայտարարելու գաւառապետների միջոցով Հայոց եկեղեցու այն տեղերի անդամներին, որոնք ստորադրուած են Հոգեւոր կառավարութեան կամ անմիջապէս Կոնստանտնուպոլիսից կախուած գործակալութիւններին, որպէս զի նրանք որոշ ժամանակին ընտրեն երկու ներկայացուցիչ, որոնք նշանակեալ ժամանակին պարտաւոր են գալ թեմի այն քաղաքը, որին պատկանում են նրանք և այն քաղաքի ներկայացուցիչների հետ ընտրեն այն թեմի համար մի պատգամաւոր:

Ծանօթ- Թէև Քութայիսի գործակալութիւնը չի ստորադրուում անմիջապէս թեմ: Իշխանութեան, բայց որովհետև Հայոց եկեղեցիները՝ որոնք գտնուում են Իմերէթիայում և Գուերիայում Վրաստանի թեմի մի մասն են կազ-

մում: ուստի և Քութայիսի գործակալութիւնը ընտրում է երկու ներկայացուցիչ:

4. Ներկայացուցիչ կարող են ընտրուել թէ տեղական ընտրողներից, թէ թեմական քաղաքի բնակիչներից, որոնք իրաւունք ունին մասնակցել ընտրութիւններին: Տեղական բնակիչներից ընտրուած ներկայացուցիչները կարող են թեմական քաղաք գնալու անհնարաւորութեան դէպքում իրանց ձայնը ուրիշին տալ հաւատարմութիւնով:

5. Արև է թեմի զլխաւոր քաղաքի ներկայացուցիչներ ընտրելու համար, իւրաքանչիւր թեմական առաջնորդ, նահանգապետների հետ համաձայնութիւն կայացնելուց յետոյ, հրամանագրում է իւր քաղաքի բոլոր եկեղեցիների աւագ քահանաներին, որ նրանք առաջիկայ կիւրակէ օրն եկեղեցիներում ծանուցմամբ հրաւիրեն այն անձանց, որոնք Հայոց եկեղեցու վաղեմի սովորութեան համաձայն իրաւունք ունին մասնակցելու աշխարհական պատգամաւորի ընտրութեանը, իրանց մէջից ընտրել ներկայացուցիչներ պատգամաւոր ընտրելու համար, որը պարտաւոր է մասնակցել ամենայն Հայոց Պատրիարքի ընտրութեանը: Այդ ներկայացուցիչների ընտրութիւնը լինում է հետեւեալ կերպով:

ա) Ամեն մի եկեղեցում այն անձինք, որոնք Հայոց եկեղեցու վաղեմի կանոններով իրաւունք ունին մասնակցելու պատգամաւորի ընտրու-

թեան, ընտրում են իրանց միջից երեք երեք պատգամաւոր:

բ) Ներկայացուցիչների ընտրութիւնը պիտի կատարուի կամ եկեղեցում ժամերգութիւն չեղած ժամանակ, կամ նրա բակում: Ընտրութիւնը պիտի վերջանայ ութերորդ օրը, ծանուցման օրից հաշուելով:

գ) Ներկայացուցիչներ ընտրելուց յետոյ կազմում է ընտրողական թերթ, որի մէջ նշանակուած են լինում ընտրուած ներկայացուցիչների անունները և ընտրողների ստորագրութիւնը:

դ) Ներկայացուցիչների ընտրութիւնը վերջանալուց յետոյ, աւագ քահանաները ներկայացնում են ընտրողական թերթերը իրանց թեմակալ առաջնորդներին, որոնք ըստ կարգի յանձնում են նահանգապետներին, իսկ սրանց չեղած տեղում գաւառապետներին:

6. Նահանգապետի կամ գաւառապետի համաձայնութիւնը առնելուց յետոյ, նշանակուում է ներկայացուցիչների ժողովի տեղն ու ժամանակը թեմի զլխաւոր քաղաքում:

7. Նշանակեալ ժամանակին բոլոր ընտրուած ներկայացուցիչները ժողովում են նշանակուած տեղը թեմի պատգամաւոր ընտրելու համար: Ժողովը համարւում է օրինական, եթէ ներկայացուցիչների ²/₃ մասը ներկայ կը լինի, հաշուելով և այն անձանց, որոնք հաւատարմութիւնով են ներկայանում:

8. Ներկայացուցիչները պատգամաւորի համար թեկնածուներ են առաջարկում քուէարկութեան միջոցով, միմիայն քուէարկուողների համաձայնութիւնը ստանալուց յետոյ:

9. Քուէարկութիւնը վերջանալուց յետոյ ձայների ամենամեծ թիւը ստացողը նշանակուում է այն թեմի պատգամաւոր, որի մէջ ընտրութիւնը կայացել է, նրանից յետոյ շատ ձայն ստացողը նշանակուում է անձնափոխանորդ, որը պատգամաւորի տեղը բռնում է նրա մահուան կամ հիւանդութեան դէպքում:

10. Ներկայացուցիչների ժողովում ընտրութեան ժամանակ ներկայ է լինում կարգապահութեան համար կառավարութիւնից նշանակուած աստիճանաւոր:

11. Բոլոր թեմերի ընտրուած պատգամաւորները պէտք է նշանակուած ժամանակին զբնան էջմիածին մասնակցելու ամենայն Հայոց Պատրիարք Կաթողիկոսի ընտրութեան:

12. Այդ պատգամաւորները Պատրիարքի ընտրութեան նշանակուած ժամին էջմիածին գնալու անհնարաւորութեան դէպքում, իրաւունք ունին օրէնքով իրենց զբաւոր կարծիքն ուղարկելու էջմիածին: Ստորագրեց Կովկասի Փոխարքայ, Գեներալ Ֆելդցէյլսմէյստէր ՄԻՍՍԵՒ *):

*) Սոյն կանոնների բնագիրը ձեռքի տակ չունէինք՝ արտատպուում է Մ. թանգեանի «Հայոց եկեղ. իրաւունքը» գրքից:

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

Հրահանգուելու համար ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի ընտրութեան ժամանակ.

Գ. Ա. Ռ. Ն. Ա.

Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի ընտրութեան մասնակցող անձանց մասին.

Յօդ. 1.

Ռուսաստանում Հայաստանեայց եկեղեցու կառավարութեան զործերի համար 1836 թուի Մարտի 11-ին ԲՍՐԶԲՍԳՈՅՆ հաստատուած օրէնսդրութեան 13-րդ յօդուածի համեմատ Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի ընտրութիւնը կատարուում է իւրաքանչիւր վիճակից ուղարկուած երկու—հոգևորական և աշխարհական, պատգամաւորների ձեռքով: Հոգևորական պատգամաւորն պէտք է լինի կամ ինքը թեմակալ առաջնորդը, կամ այն անձը՝ որին նա նշանակուում է հոգևորականներից, իսկ աշխարհական պատգամաւորն ընտրուում է Հայոց բոլոր պատուաւորներից, մեկիքներից, հաթիրապետներից և Հայաստանեայց եկեղեցու այլ

յարգելի աշխարհական անդամներէց, որոնք ընտրելու իրաւունք ունին այդ եկեղեցու վաղեմի սովորութեան համաձայն:

Յօդ. 2.

Այս ընտրուած պատգամաւորներն, եթէ Պատրիարքի ընտրութեան նախօրօք որոշուած ժամանակին չկարողանան անձամբ դալ Էջմիածին՝ իրաւունք ունին իրենց կարծիքը գրաւոր յայտնելու՝ հասուցանելով այն Էջմիածնի Սինօզին:

Յօդ. 3.

Բացի պատգամաւորներէց Պատրիարքի ընտրութեան մասնակցում են Լուսաւորչական Հայոց Սինօզի բոլոր անդամները և այդ ժամանակ Էջմիածնում գտնուած աւագագոյն եպիսկոպոսներէց եօթն հոգի, իսկ եպիսկոպոսների պակասութեան դէպքում թիւը լրանում է այնտեղի աւագագոյն վարդապետներով:

Յօդ. 4.

Էջմիածնի Սինօզի պրօկուրօրն պարտաւոր է ներկայ լինել Էջմիածնի Մայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի ընտրութեան ժամանակ կարգ ու կանոնի հսկողութեան համար և բացատրելու ընտրութեան կանոնները՝ այս խնդրի վերաբերեալ որ և է թիւրիմացութիւն ծագե-

լու դէպքում: (Օրէնսդրութիւն Հայաստանեայց եկեղեցու կառավարութեան համար յօդ. 46):

Ժամօթութիւն: Այն դէպքում, երբ թիւրիմացութիւնները ստանան այնպիսի կերպարանք, որոնք հակառակ են ընտրութեանց ժամանակ ընդունուած կարգ ու կանոնի և բարեկարգութեան, այն ժամանակ իրաւունք է տրուում աւագագոյն Անդամին (Կաթողիկոսական Տեղապահին) յետաձգել ժողովը միւս օրուան, միջոցներ ձեռք առնելով համաձայնութեան բերելու ծագած թիւրիմացութիւնները:

Յօդ. 5.

Ընտրութիւնը կատարուում է Էջմիածնի Մայր Տաճարում՝ ամենախիստ կերպով պահպանելով Հայաստանեայց եկեղեցու սահմանեալ կարգերը, որոնք են հետևեալը:

Գ. Ա. Խ Բ.

Նախապատասխան կանոնների մասին, որ պէտք է կատարել նախ քան ընտրութիւնը:

Յօդ. 6.

Իւրաքանչիւր թեմակալ Առաջնորդի գալուստն պէտք է Լուսաւորչական Հայոց Սինօզի Ատենապետի Տեղական—Էջմիածնի Տաճարի աւագագոյն եպիսկոպոսը նորան զիմաւորելու համար

ուղարկում է մի եպիսկոպոս և երկու վարդապետ, որոնք պատշաճ ողջունից յետոյ առաջնորդում են նրան նախօրօք որոշուած բնակարանը: Իսկ աշխարհական պատգամաւորներին դիմաւորելու է դուրս գալիս Ղազարապատից *) կարգուած հիւրընկալ հոգեւորականը, որն և տեղաւորցնում է նրանց Ղազարապատի սենեակներում: Հիւրընկալը արձանագրում է առանձին յատուկ պատրաստած մատեննում բոլոր եկած պատգամաւորների անունները, նշանակելով նրանց իւրաքանչիւրի ժամանելու օրը:

Յօդ. 7.

Հոգեւորական և աշխարհական բոլոր պատգամաւորների ժամանելուց, Սինօդ ուղարկուած գրաւոր կարծիքներն սաանալուց և Կովկասի քաղաքական մասի Տ. Կառավարչապետի ժողովի բացման համար տրուած առաջադրութիւնից յետոյ՝ նոյն հիւրընկալ հոգեւորականը ներկայացնում է եկած պատգամաւորների ցուցակը Սինօդին, որն և միեւնոյն ժամանակ որոշում է Պատրիարք-Կաթողիկոսի ընտրութեան օրն և այդ առթիւ կազմելով օրագիր, մատուցանում է նրա քաղուածն Սինօդի Ատենապետի Տեղակալին նրանից կախուած կարգադրութեանց համար՝ սրբազան պաշտամունքի կատարելունկատմամբ համաձայն ստորև նշանակեալ ձևի:

Այժմ Հայրիկապատ, որ վանքի հիւրանոցն է:

Յօդ. 8.

Ժողովի զբաղրութեանց համար էջմիածնի Կուսաւորչական Սինօդն կարգում է իւր Ատենադպրին և նրա երկու օգնականներին:

Գլուխ Գ.

Ձորս աւագագոյնի քեկնածուների ընտրութեան մանրամասնութեան և նրանցից երկուսի քեկնածուի մը Ծայրագոյն Պատրիարքի ասիականի համար փութարկելու մասին.

Յօդ. 9.

Նախ քան աւագագոյնի քեկնածուների ընտրութիւնը էջմիածնի Տաճարում՝ Միածին Որդու Իջման Սեղանի առաջ դնում են կարմիր մահուդով ծածկած սեղան ներկայ եղող և էջմիածնի վանքի միաբանութեան միջից որոշ թուով նշանակուած պատգամաւորների համար, և առանձին սեղան էջմիածնի Սինօդի պրօկուրօրի համար:

Յօդ. 10.

Յիշեալ սեղանի վրայ դնում են խաչ և Աւետարան, և երկու կողմից երկու արծաթէ աշտանակներ՝ վառուած մոմերով: Բացի զբանից. 1, Տպած օրէնսդրութիւն Ռուսաստանում

Հայոց եկեղեցու կառավարութեան գործերի մասին, և Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի ընտրութեան համար կանոններ. 2, Հինգ ընտրողական թերթեր, չորսը համաձայն ձևի № 1, և մինը համաձայն ձևի № 2, որ կցուում է սրբան: 3, Բողոք աշխարհական պատգամաւորների անուանական ցուցակը, որոնք իրաւունք ունին ընտրելու Ծայրագոյն Պատրիարք - Կաթողիկոսին Հայաստանեայց եկեղեցու վաղեմի սովորութեան համաձայն (յօդ. 37): 4, Անուանական ցուցակ թէ էջմիածնի վանքի միաբանութիւնից հոգեւորականութեան սահմանուած թուի և թէ ընտրութեան համար եկած պատգամաւորների. 5, Գրաւոր կարծիքներ պատգամաւորների, որոնք չեն կարող անձամբ ներկայ լինել ընտրութեան ժամանակ. 6, Անուանական ցուցակ այն պատգամաւորների, որոնք թէպէտ և պարտաւոր էին ներկայ լինել ժողովին, բայց ոչ ժամանեցին ժողովի և ոչ էլ ուղարկեցին Սինօդ իրենց կարծիքը. 7, Կովկասի քաղաքական մասի 8. Կառավարչապետի առաջադրութիւնը ժողովը բանալու մասին:

ԳԼՈՒԽ Դ.

Ժողովի պարապմունքի կարգի մասին.

Յօդ. 11.

Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի ընտրութեան նշանակած օրը պատգամաւորներն առաւօտեան 9-րդ ժամին հաւաքուում են Կաթողիկոսական վեհարանը, որտեղ նրանց ընդունում են էջմիածնի Տաճարի աւագագոյն սրբազանը և Սինօդի միւս անդամները: Սրանց յետոյ աւագագոյն սրբազանը հրաւիրում է նրանց եկեղեցի ներկայ լինելու Աստուածային պատարագին, գոհացողական մաղթանքին Նորին Կայսերական Մեծութեան և բոլոր Օգոստփառ տան կենաց երկարութեան և առողջութեան համար և երգուեցնելու աշխարհական պատգամաւորներին կարգերի պահպանութեան և ղէպի առաջիկայ գործն վերաբերուելու անկողմնապահութեան համար:

Ծանօթութիւն. Հոգեւորականներին չեն երգուեցնում, այն ենթադրութեամբ, որ նրանք պարտաւոր են համաձայն իրենց պարտաւորութեան և սրբազան աստիճանի պահպանել այդ կանոնները:

Յօդ. 12.

Հանդիսաւոր երթն ղէպի Տաճար կատարուում է այսպէս. առջևից գնում է Պատրիարք

Կաթուղիկոսի Տեղապահը (Սինօղի աւագա-
 գոյն անդամը), յետոյ Երուսաղէմի, Սսի-
 Աղթամարի և Կ. Պօլսի պատրիարքների պատ-
 դամաւորները, նրանց յետեւից կարգով զոյգ զոյգ
 աջ կողմից գնում են Էջմիածնի Սինօղի ան-
 դամները և տեղւոյն եօթն աւագագոյն եպիս-
 կոպոսները, որոնց ուղեկցում է Սինօղի պրօ-
 կուրօրը, իսկ ձախ կողմից՝ թեմակալ եպիսկո-
 պոսներն կամ նրանց ներկայացուցիչները կար-
 գով նոյնպէս զոյգ զոյգ իրանց ձեռնադրութեան
 աստիճանի աւագութեան համեմատ, և ապա
 նրանց յետեւից գնում են աշխարհական պատ-
 դամաւորները նոյն կարգով քաղաքների աւա-
 գութեան համեմատ և վերջապէս Էջմիածնի
 Սինօղի Ատենադպիրն, որը փակում է շարքը:

Ծանօթութիւն. Եթէ անյաջող եղանակ պա-
 տահի՝ այս հանդիսաւոր երթը չէ կատարուում,
 և համաձայն աւագագոյն եպիսկոպոսի և Էջ-
 միածնի Սինօղի պրօկուրօրի հրաւիրանաց՝ պատ-
 դամաւորները Կաթուղիկոսի Վեհաբանից գնում
 են եկեղեցի արանց պահպանելու վերողբեալ
 կարգերը:

Յօդ. 13.

Էջմիածնի տաճարի աւագագոյն եպիսկո-
 պոսը հանդիսով մատուցանում է սուրբ պա-
 տարազն և զոհացողական մաղթանքը, իսկ սուրբ
 պատարազն և նորին Կապուեական Մեծուքեան

և Նորսի համայն Օգոստափառ Տան կեանքի
 երկարութեան համար կատարած զոհացողական
 մաղթանքն աւարտելուց յետոյ՝ աւագագոյն
 եպիսկոպոսն երդուեցնում է բոլոր ներկայ եղող
 աշխարհական պատգամաւորներին համեմատ
 սահմանուած ձևի (№ ձև 3): Բոլոր երդուեալ-
 ները ստորագրում են իրենց անուններն երդ-
 ման թղթի վրայ:

Յօդ. 14.

Այս ծիսի կատարման հետեւալ օրը Պատ-
 րիարք-Կաթուղիկոսի ընտրութեան բոլոր իրա-
 ւունք ունեցողները տեղ են բռնում Միածին
 Որդու Իջման Սեղանի առջ վրուած գրասե-
 ղանի շուրջը (յօդ. 9), մէջտեղը Պատրիարք
 Կաթուղիկոսի պաշտօն կատարողը՝ աջ կողմից
 վերոյիշեալ չորս պատրիարքների պատգամաւոր-
 ները և բոլոր հոգեւորականութիւնը, որոնք ու-
 նին Պատրիարք-Կաթուղիկոսի ընտրութեան իրա-
 ւունք՝ ըստ աւագութեան իրենց ձեռնադրու-
 թեան, իսկ ձախ կողմից աշխարհական պատգա-
 մաւորները՝ իւրաքանչիւրի կոչման աւագու-
 թեան համեմատ:

Ծանօթութիւն. Հոգեւորական անձինք, որոնք
 համաձայն կրօնական ծիսի իրաւունք ունին
 բազմելու տաճարում, պահպանում են այդ իրա-
 ւունքը և ներկայ զեպքում, իսկ մնացածները
 ընտրում են յոտնկայս:

Ամենից առաջ բարձրաստիճան հոգեւորականներից աւագագոյնը երկու աւագ սարկաւագների գործակցութեամբ կարդում է պատշաճաւոր սաղմոս և աղօթք Հայաստանեայց եկեղեցու ծիսի համաձայն, դրանից յետոյ նոյն բարձրաստիճան հոգեւորականը պատշաճ քարոզ է ասում, որի մէջ բացատրում է ժողովին գործի վսեմութիւնը՝ որի պատճառով դումարուած են, այն է եկեղեցու պէտքերը և այն բարօրութիւնը, որ սպասում է եկեղեցին իւր արժանաւորագոյն Գլխի ընտրութիւնից, հրաւիրում է ժողովին, որպէս զի հեռու պահելով բոլոր վնասակար երեսպաշտութիւնը, աշխատեն որ Հայաստանեայց եկեղեցու ընտրուած Գլուխն կարողանայ պահել նորա վեհ աստիճանի հետ կապուած բոլոր արժանաւորութիւնները, այն ճշմարիտ և իրաւացի մտքով, որ ամենայն Հայոց արժանաւորագոյն Պատրիարք-Կաթողիկոսի ընտրութիւնից կախուած է սոյն եկեղեցու և ամենայն Հայոց սուրբ Էջմիածնի Կաթողիկէ Աթոռի բոլոր բարօրութիւնը: Որից յետոյ Էջմիածնի Սինօդի պրօկուրօրը ժողովի բացման մասին կարդում է Կովկասի քաղաքական մասի Տ. Կառավարչապետի առաջադրութիւնը և ժողովն սկսում է աւագագոյն թեկնածուների ընտրութիւնը:

Ժողովականներից ամեն մէկը տալիս է իւր կարծիքը աւագագոյն թեկնածուների ընտրութեան համար ազատօրէն՝ իւր ուղիղ հասկացողութեան և մաքուր խղճի համաձայն առանց որ և է երկիւղի, ի նկատի չառնելով բնաւին որ և է օտար առաջարկութիւն, կամ մասնաւոր նամակ, թէ և նա լինի Հայոց ազգի պատուաւոր անդամից. իւրաքանչիւրը վարուում է այնպէս, որ ամենի համար կարողանայ Տիրոջ Աստուծոյ առաջ պատասխան տալ: Ուստի և իւրաքանչիւրը հեռացնելով ամենայն յամառութիւն անձնաւորութեան և կարծիքի, աշխատում է տեսնել ընդհանրութեան կարծիքի մէջ ճշմարտութեան հաստատուն հիմքը:

Ժողովի իւրաքանչիւր անգամ պարտաւոր է արտայայտել իւր կարծիքը համառօտ, պարզ, առհասարակ չհեռանալով իսկական առարկայից, նախ առաջ բերելով իւր կողմից առաջարկուած բարձրաստիճան հոգեւորականի արժանաւորութիւնը, յետոյ ապացուցութիւն և վերջապէս եկեղեցու համար նրանից սպասելիքօրում:

Յօդ. 18.

Կարծիք յայտնելու ժամանակ սկսելով կրտսերագունից և կարգով հասնելով աւագագոյնը՝ ոչ ոք չպիտք է ուրիշի խօսքն ընդհատի, կամ խառնուի նրա խօսակցութեան մէջ, մինչև որ նա կ'աւարտի իւր առաջարկութիւնը: Միևնոյն ժամանակ յայտնուած կարծիքները պրօկուրօրը գրում է և կարդում է բարձրաձայն և վաւերացնում է այն անդամի ստորագրութեամբ, ով որ յայտնել է կարծիք:

Յօդ. 19.

Էջմիածին եկած պատգամաւորը՝ եթէ հիւանդութեան պատճառով կամ այլ անսպասելի դիպուածով չէ կարող ներկայ լինել ժողովին՝ պարտաւոր է հասցնել ժողովին իւր կարծիքն առանց հետևեալ օրուան թողնելու: Նոյնը պարտաւոր են կատարելու և էջմիածնի Սինօղի անդամները, եթէ նրանցից մէկը անսպասելի հանդամանքի պատճառով չէ կարող ներկայ լինել ժողովին: Ազատ են իրենց գրաւոր կարծիքը տալու միայն այն պատգամաւորները, որոնք ծանր հիւանդութեան պատճառով բոլորովին հնարաւորութիւն չունին յայտնելու որ և է կարծիք:

Յօդ. 20.

Այս ժողովի բոլոր անդամների ձայները միմեանց հաւասար են:

Յօդ. 21.

Ամբողջ ժողովի ձայները հաւաքելուց և երկրորդ յօդուածի հիման վրայ Սինօղ հասած զրաւոր կարծիքներին հասու լինելուց յետոյ՝ չորս աւագագոյն բարձրաստիճան հոգևորականները՝ նրանց օգտին տուած ձայնից բազմութեան համեմատ՝ ճանաչում են թեկնածութեան իրաւունք ունեցողներ ընտրուելու համար. ձայների հաւասարութեան դէպքում վիճակն որոշում է թէ որ մէկը կարող է համարուել աւագ:

Ծանօթութիւն. Բացակայ պատգամաւորների գրաւոր կարծիքը, որոնց ձայները ներկայ եղողների ձայներին հաւասար են՝ հաշւում է յօգուտ այն անձի, որը յիշատակում է այդ կարծիքի մէջ յականէ անուանէ:

Գլխիկ Ե.

Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի երկու թեկնածուների ընտրութեան մասին.

Յօդ. 22.

Երկրորդ կամ երրորդ օրը ժողովում անձամբ ներկայ եղողներն ընտրում են երկու կանգիդատներ Ծայրագոյն Պատրիարքի աստիճանի համար:

Յօդ. 23.

Ընտրութիւնը կատարուում է ձայնետուութեամբ հետագայ կարգով:

Յօդ. 24.

Պատշաճաւոր աղօթք կարդալուց և համառօտ խօսք արտասանելուց յետոյ, ինչպէս յիշատակուած է 15-րդ յօդուածում, յայտարարուում է չորս աւագագոյն թեկնածուներէց առաջինի անունը:

Յօդ. 25.

Ընտրութեան իրաւունք ունեցող անձամբ ներկայ եղողներէց իւրաքանչիւրը թեկնածուի անունը յայտարարելուց՝ յայտնում է ըաց կերպով թէ արդեօք համարում է առաջարկուած անձին արժանի Մայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի աստիճանին: Այդ արժանի համարելը արտայայտուում է մէկ խօսքով՝ ընտրեմ կամ ոչ ընտրեմ: Ձայնետուութիւնը սկսուում է աշխարհական պատգամաւորների կրտսերագոյն անդամից և այս եղանակով շարունակուում է դէպի վեր այն կարգի և հիման վրայ, ինչպէս ստուած է վերև 18-րդ յօդուածում:

Ծանօթութիւն. Բացակայ պատգամաւորների կարծիքը չի ընդունուում ի հաշիւ ձայների, որովհետև Ռուսաստանում Հայաստա-

նեայց եկեղեցու կառավարութեան զործերի համար 1836 թուին ԲԱՐՉՐԱԳՈՅՆ Հաստատուած Օրէնսդրութեան յօդ. 17 զօրութեան համեմատ՝ ընտրութիւնը պէտք է կատարուի միմիայն անձամբ ներկայ եղող պատգամաւորների միջոցով:

Յօդ. 26.

Այն թեկնածուն, որին ընտրում են, ձայն է տալիս:

Յօդ. 27.

Իւրաքանչիւրի ձայնը՝ յայտարարելուց յետոյ՝ արձանագրուում է Սինօդի պրօկուրօրն ընտրութեան ցուցակում և վաւերացնում է ընտրողի իսկական ստորագրութեամբ: Երբ ներկայ եղող բոլոր Անդամներն արդէն տալիս են իրենց ձայնը, այն ժամանակ ցուցակն մատուցանում են Ժողովի Նախագահին, որն ընտրողական և ոչ ընտրողական ձայներն առանձին առանձին համարելով՝ նշանակում է նրանց թիւն ընտրողական ցուցակի պատշաճաւոր խորանումն № 2 քուէարկուած թեկնածուի անունն հանդէպ:

Յօդ. 28.

Սրանից յետոյ ընտրող և ոչ ընտրող ձայների թիւը յայտարարուում է ներկայ Ժողովին և ապա սկսուում է միւս հետևեալ թեկնածուի

ընտրութիւնը նոյն կարգով և այդպէս էլ մնացած երկու թեկնածուներինը:

Յօդ. 29.

Երբ քուէարկուում է ժողովին նախագահող աւագագոյն Հոգևորական Անդամը՝ այն ժամանակ ներկայ գտնուող Հոգևորականութեան յաջորդ աւագագոյնը համարուում է ձայները գրում է ցուցակում և այլն՝ ինչպէս յիշատակուած է 27-րդ յօդուածում:

Յօդ. 30.

Ընտրութեան ամբողջ արարողութեան աւարտումից յետոյ՝ կարգացում է բարձրաձայն չորս ընտրուած թեկնածուների ցուցակը, որոնցից առաւել ձայն ստացող երկուսը՝ համարուում են Ծայրագոյն Պատրիարքի աստիճանի թեկնածու:

Յօդ. 31.

Չորս աւագագոյն թեկնածուների ընտրողական ցուցակում թեկնածու համարուող երկուսի զիմաց նշանակուում է, որ համաձայն նրանց տրուած ձայների առաւելութեան արժանացել են Ծայրագոյն Պատրիարքի աստիճանի թեկնածութեան: Այս ընտրողական ցուցակին

ստորագրում են ժողովին մասնակցող բոլոր անդամները, վաւերացնում է պրօկուրօրն և առաջարկուում է՝ որին հարկ է:

Յիշեալ ցուցակի պատճէնը՝ ստորագրութեամբ Էջմիածնի Սինօզի անդամների և նորա Ատենադպրի՝ մնում է Սինօզի գործերի մէջ:

Յօդ. 32.

Բացի ստորագրուած ընտրողական ցուցակից՝ Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի ընտրութեան համար պատրաստուում է առանձին օրագիր՝ բաղկացած երկու օրինակից, որ ստորագրում են բոլոր ժողովականները և Էջմիածնի Սինօզի Ատենադպիրն, նրանցից մէկը առաջարկուում է՝ ուր պէտքն է, իսկ միւսը մնում է Սինօզի գործերում:

Յօդ. 33.

Ժողովի զբաղմունքի ամբողջ ընթացքում ատենակալութիւնը լինում է ցերեկով՝ առաւօտեան իններորդ ժամից սկսած մինչև կեսօրից յետոյ երկրորդ ժամը, իսկ երեկոյեան ատեան չէ լինում:

Յօդ. 34.

Ընտրութիւնն աւարտելուց և երկու օրինակ ընտրողական ցուցակն ու ընտրութեան համար կազմած առանձին օրագիրը ստորագրելուց յետոյ՝ ժողովն ուղարկում է իւր երեք անդամից բաղկացած պատգամաւորութիւնը՝ մի հոգեւորական և երկու աշխարհական, Կովկասի քաղաքական մասի Տ. Կառավարչապետի մօտ իրենից կախուած տնօրէնութիւնն անելու համար համեմատ 22-րդ յօդուածի ԲՍՐՁՐԱԳՈՅՆ հաստատուած 26 Ապրիլի 1883 թ. կարգադրութեան՝ Կովկասի կողմերի կառավարութեան համար:

Կովկասի քաղաքական մասի Կառավարչապետի Դիւանատան Տեսչի փոխարէն

Փոխ-Տեսուչ Բօզդէ

Ի սեղի գործավարի Օսեցկի

П РА В И Л А

Для руководства при избраніи Верховнаго Патріарха Католикоса Всѣхъ Армянъ.

Глава I.

О лицахъ участвующихъ въ выборѣ Верховнаго Патріарха-Католикоса.

§ 1.

На основаніи § 13-го ВЫСОЧАЙШЕ утверждённаго 11 Марта 1836 года положенія, о управленіи дѣлами Армяно-Григоріанской церкви въ Россіи выборъ Верховнаго Патріарха-Католикоса производится чрезъ посредство депутатовъ: присылаемыхъ отъ каждой Епархіи по два: духовнаго и свѣтскаго. Духовный депутатъ долженъ быть или самъ Епархіальный Начальникъ, или тотъ, коего онъ назначитъ изъ духовныхъ; свѣтскій же депутатъ избирается всѣми почетными Армянами, Меликами, Юзбашами и другими по-

четными свѣтскими членами Армяно-Григоріанской церкви, пользующимся правомъ избранія по древнему обычаю сей церкви.

§ 2.

Сии избранные депутаты, если немогутъ лично явиться въ Эчміадзинскій монастырь къ назначенному для выбора Патріарха времени, имѣютъ право письменно объявить свое мнѣніе, доставляя оное въ Эчміадзинскій Синодъ.

§ 3.

Сверхъ депутатовъ участвуютъ въ избраніи Патріарха всѣ члены Эчміадзинскаго Армяно-Григоріанскаго Синода и семь старшихъ изъ находящихся въ это время въ Эчміадзинѣ Епископовъ, въ случаѣ же недостатка Епископовъ, число это пополняется старшими мѣстными архимандритами.

§ 4.

Прокуроръ Эчміадзинскаго Синода долженъ присутствовать при избраніи Верховнаго Эчміадзинскаго Патріарха для соблюденія порядка и объясненія правилъ избранія въ случаѣ какихъ либо возникшихъ недоразумѣній по сему предмету, (положеніе объ управленіи Армяно-Григоріанскою Церковью § 46).

Примѣчаніе. Въ случаѣ бы недоразумѣнія эти приняли оборотъ не совмѣстный съ порядкомъ и благочиніемъ, при выборахъ быть долженствующимъ, то старшему члену (Исправляющему должность Патріарха) представляется отложить собраніе до другого дня, принявъ между тѣмъ мѣры къ соглашенію возникшихъ недоразумѣній.

§ 5.

Избраніе производится въ Эчміадзинскомъ соборѣ Св. Григорія Просвѣтителя съ строгимъ соблюденіемъ обрядовъ, установленныхъ Армяно-Григоріанскою Церковью и заключающихся въ слѣдующемъ.

Глава II.

О предварительныхъ правилахъ, имѣющихъ быть исполняемыми предъ избраніемъ.

§ 6.

По приѣздѣ каждаго Епархіальнаго Начальника, Намѣстникъ Предсѣдателя Эчміадзинскаго Армяно-Григоріанскаго Синода, Старшій Преосвященный Эчміадзинскаго храма посылаетъ на встрѣчу къ нему одного Епископа и двухъ Архимандритовъ, которые, послѣ приличнаго при-

вѣтствія, сопровождають его въ назначенное ему жилище; къ свѣтскимъ же депутатамъ выходитъ на встрѣчу изъ Газарапата духовная особа, назначенная для приѣма гостей и помѣщаетъ ихъ въ отведенныхъ для нихъ покояхъ, въ томъ же Газарапатѣ расположенныхъ. Онъ вноситъ въ заготовленную на сей предметъ книгу имена всѣхъ прибывшихъ депутатовъ, означая день прибытія каждаго.

§ 7.

По приѣздѣ всѣхъ духовныхъ и свѣтскихъ депутатовъ, по полученіи письменныхъ отзывовъ, отправленныхъ въ Синодъ, и по предложеніи Г. Главнначальствующаго гражданскою частію на Кавказѣ объ открытіи собранія, та же духовная особа представляетъ Синоду списокъ прибывшимъ депутатамъ; въ то же время означаетъ день избранія Патріарха Католикоса и составивъ по сему предмету журналъ, подаетъ выписку изъ онаго Намѣстнику Предсѣдателя Синода для записанныхъ отъ него распоряженій, касательно совершенія священнодѣйствія, имѣющаго быть описаннымъ ниже образамъ.

§ 8.

Для письменоводства собранія Эчміадзинскій Синодъ назначаетъ своего Секретаря и двухъ Помощниковъ его.

Глава III.

О подробностяхъ избранія четырехъ Старшихъ Кандитатовъ и о балатированіи изъ нихъ двухъ кандидатовъ на санъ Верховнаго Патріарха.

§ 9.

Предъ избраніемъ Старшихъ кандидатовъ, въ Эчміадзинскомъ храмѣ предъ престоломъ Сошествія Единороднаго Сына имѣетъ быть поставленъ письменный столъ, покрытый краснымъ сукномъ, для присутствующихъ депутатовъ и назначеннаго числа депутатовъ изъ среды братства Эчміадзинскаго Монастыря и другой отдѣльный столъ для Прокурора Эчміадзинскаго Синода.

§ 10.

На означенномъ столѣ полагаются Крестъ и Евангеліе, а по обѣимъ сторонамъ оныхъ два серебряные подсвѣчника съ зажженными свѣчами. Кромѣ того: 1) печатное положеніе объ управленіи Армяно-Григоріанскою Церковью въ Россіи и правила объ избраніи Верховнаго Католикоса. 2) пять избирательныхъ списковъ: четыре по формѣ № 1 и одинъ по формѣ № 2, при семъ прилагаемымъ. 3) поименный списокъ всѣхъ

свѣтскихъ депутатовъ, имѣющихъ право избра-
нія Верховнаго Католикоса по древнему обычаю
Армяно-Григоріанской Церкви (§ 37). 4) поимен-
ный списокъ опредѣленнаго числа духовенства
изъ среди братства Эчміадзинскаго Монастыря
и прибывшихъ депутатовъ на избраніе. 5) пись-
менные мнѣнія депутатовъ, кои не могутъ лично
присутствовать при избраніи. 6) поименный спи-
сокъ депутатовъ, кои хотя и должны были при-
сутствовать въ собраніи, но не прибыли туда и
не прислали въ Синодъ своихъ мнѣній, и нако-
нецъ 7) предложеніе Г. Главнначальствующаго
гражданскою частію на Кавказѣ объ открытіи
собранія.

Глава IV.

Касательно порядка занятій собранія.

§ 11.

Въ назначенный день избранія Верховнаго
Патріарха Католикоса, депутаты собираются въ
9 часовъ утра въ Патріаршій домъ, гдѣ при-
нимаютъ ихъ Старшій Преосвященный Эчміадзин-
скаго храма и другіе члены Синода. Вслѣдъ за-
симъ Старшій Преосвященный приглашаетъ ихъ
въ Церковь къ слушанію Божественной литургіи
и молебствія о здравіи и долгоденствіи *Его Им-*

ператорскаго Величества и всего Августѣйшаго
Дома и для приведенія къ присягѣ свѣтскихъ
депутатовъ на соблюденіе порядка и безпристра-
стія въ предстоящемъ дѣлѣ.

Примѣчаніе. Духовные не приводятся
къ присягѣ, въ томъ предположеніи, что они
должны по долгу своему сохранять правила
эти согласно ихъ священному сану.

§ 12.

Шествіе во храмъ совершается въ слѣдую-
щемъ порядкѣ: Впереди идетъ Исправляющій
должность Патріарха Католикоса (Старшій Членъ
Синода), потомъ депутаты Патріарховъ Іеруса-
лимскаго, Сисскаго, Ахтамарскаго и Константи-
нопольскаго; занимаютъ слѣдуютъ по два врьдъ съ
правой стороны Члены Эчміадзинскаго Синода и
семь старшихъ мѣстныхъ Епископовъ, сопровож-
даемые Прокуроромъ Синода, съ лѣвой же сто-
роны Епархіальные Епископы или депутаты ихъ
также подва въ рядъ по старшинству посвященія
ихъ въ санъ, а вслѣдъ занимаютъ слѣдуютъ свѣтскіе
депутаты, тѣмъ же порядкомъ, по старшинству
городовъ, и, наконецъ, замыкаетъ шествіе Сек-
ретарь Эчміадзинскаго Синода.

Примѣчаніе. Въ случаѣ неблагопріят-
ной погоды, сіе торжественное шествіе от-

мѣняется и депутаты, по приглашенію Старшаго Преосвященнаго и Прокурора Эчмиадзинскаго Синода, отправляются изъ обители Католикоса въ церковь безъ соблюденія сего вышеозначеннаго обряда.

§ 13.

Божественную литургію и молебствіе совершаетъ съ торжествомъ Старшій Преосвященный Эчмиадзинскаго храма; по окончаніи же литургіи и молебствія за долгоденствіе *Его Императорскаго Величества* и всего *Августѣйшаго* Дома, Старшій Преосвященный приводитъ къ присягѣ всѣхъ присутствующихъ свѣтскихъ депутатовъ по установленной формѣ (прилож. № 3). Всѣ присягнувшіе подписываютъ имена свои на присяжномъ листѣ.

§ 14.

На другой день совершенія сего обряда всѣ присутствующіе, имѣющіе право избранія Патриарха Католикоса, занимаютъ мѣста вокругъ поставленнаго предъ Алтаремъ Сошествія Единороднаго Сына, письменнаго стола (§ 9) посредникъ Исправляющій должность Патриарха Католикоса, по правую сторону вышеупомянутые депутаты четырехъ Патриарховъ и все духовенство, имѣющее право избранія Патриарха Католикоса,

по старшинству посвященія ихъ, а по лѣвую сторону свѣтскіе депутаты, по старшинству званія каждаго.

Примѣчаніе. Духовные особы, имѣющіе право, по обрядамъ религіи, возсѣдать въ храмѣ, сохраняютъ это право и при настоящемъ случаѣ; всѣ же прочіе избираются.

§ 15.

Прежде всего старшій изъ духовныхъ сановниковъ при содѣйствіи двухъ Архидиаконовъ, читаетъ псаломъ и молитву, на сей случай назначенную по обряду Армяно-Григоріанской Церкви; послѣ сего тотъ же самый духовный сановникъ произноситъ приличное слово, въ которомъ, представляя собранію всю важность дѣла, на которое оно созвано, нужды церкви и то благоденствіе, какое ожидаетъ Церковь отъ избранія достойнѣйшаго Главы оной, приглашаетъ собраніе, чтобы оное, отстраняя всякое вредное лицепріятіе все стараніе свое приложило на то только, чтобы избранный Глава Армянской Церкви умѣлъ поддерживать все достоинство, сопряженное съ его высокимъ саномъ, съ тою истинною и справедливою мыслію, что отъ избранія достойнѣйшаго Патриарха Католикоса всѣхъ Армянъ зависить все благоденствіе оной церкви и

Каѳолическаго Эчміадзинскаго Престола всѣхъ Армянъ. Вслѣдъ засимъ Прокуроръ Эчміадзинскаго Синода читаетъ предложеніе Г. Главноначальствующаго гражданскою частію на Кавказѣ объ открытіи собранія, и собраніе приступаетъ къ избранію старшихъ Кандидатовъ.

§ 16.

Каждый изъ присутствующихъ предлагаетъ мнѣніе свое касательно избранія старшихъ Кандидатовъ свободно, по крайнему своему разумѣнію и по чистой совѣсти, безъ всякой боязни и не взирая ни на какое чуждое предложеніе или частное письмо, хотя бы оно было и отъ почетнѣйшихъ особъ Армянской націи; всякій дѣйствуетъ такъ, чтобы могъ дать отвѣтъ во всемъ предъ Господомъ Богомъ; и потому каждый, отстраняя всякое упорство мнѣній и личности, старается видѣть въ общемъ мнѣніи прочное основаніе истины.

§ 17.

Всякій Членъ собранія мнѣніе свое долженъ излагать кратко, ясно, вообще не отдаляясь отъ настоящаго предмета, представлять сперва достоинство духовнаго Сановника, имъ предлагаемаго, потомъ доказательство и наконецъ какую онъ ожидаетъ отъ него пользу, для Церкви.

§ 18.

Во время объявленія мнѣнія, начиная отъ младшаго и по порядку доходя до старшаго, никто не долженъ прерывать рѣчь другаго, или вмѣшиваться въ нее, пока тотъ не окончитъ своего предложенія. Объявляемые мнѣнія записываются въ то же время Прокуроромъ и по запискѣ прочитываются громко и удостоверяются подписомъ члена объявившаго мнѣніе.

§ 19.

Депутатъ прибывшій въ Эчміадзинъ, который, по причинѣ болѣзни, или по какому либо другому непредвидимому случаю, не можетъ присутствовать въ собраніи, долженъ доставить въ оное свое мнѣніе не откладывая сего до слѣдующаго дня. То же самое обязываются исполнять и члены Эчміадзинскаго Синода, если кто изъ нихъ не можетъ присутствовать въ собраніи по непредвидимымъ обстоятельствамъ. Освобождены отъ поданія письменнаго своего мнѣнія только изъ пріѣзжихъ депутатовъ, которые, по причинѣ тяжелой болѣзни, находятся въ рѣшительной невозможности дать какое либо мнѣніе.

§ 20.

Всѣ голоса членовъ сего собранія равны между собою.

§ 21.

По отобраніи голосовъ всего собранія и по разсмотрѣніи письменныхъ отзывовъ, полученныхъ Синодомъ на основаніи § 2, четыре старшихъ Духовныхъ сановника по большинству голосовъ, поданныхъ въ ихъ пользу, признаются имѣющими право на избраніе въ Кандидаты; въ случаѣ же равнаго числа голосовъ, жребій рѣшаетъ, кто долженъ считаться старшимъ.

Примѣчаніе. Письменные отзывы отсутствующихъ депутатовъ должны идти въ счетъ, на равнѣ съ голосами присутствующихъ, въ пользу того лица, которое въ отзывахъ тѣхъ именуется.

Глава V.

Объ избраніи двухъ Кандидатовъ на санъ Верховнаго Патріарха—Католикоса.

§ 22.

На другой или на третій день изъ четырехъ вышеозначенныхъ старшихъ Кандидатовъ налич-

ные присутствующіе въ собраніи избираютъ двухъ кандидатовъ на санъ Верховнаго Патріарха.

§ 23.

Избраніе производится чрезъ подачу голосовъ нижеслѣдующимъ порядкомъ.

§ 24.

По прочтеніи приличной молитвы и произнесеніи краткой рѣчи, сообразно тому какъ сказано выше въ § 15, провозглашается имя перваго изъ четырехъ старшихъ кандидатовъ.

§ 25.

По провозглашеніи имени кандидата, каждый изъ наличныхъ присутствующихъ, имѣющихъ право избранія, объявляетъ гласно: удостоиваетъ ли онъ предложенное лице къ занятію сана Верховнаго Патріарха Католикоса. Удостоеніе это выражается однимъ словомъ: *избираю* или *неизбираю*. подача голосовъ начинается съ младшаго Члена изъ свѣтскихъ депутатовъ и такимъ образомъ восходитъ по порядку, на томъ самомъ основаніи, какъ сказано выше въ § 18.

Примѣчаніе. Отзывы отсутствующихъ депутатовъ въ счетъ голосовъ не принимаются, такъ какъ, по силѣ § 17 **ВЫСО-**

ЧАЙШЕ утвержденного въ 1836 году положенія объ управленіи Армянской Церкви въ Россіи, избраніе должно производиться одними только наличными присутствующими.

§ 26.

Кандидатъ, котораго избираютъ, голоса не подаетъ.

§ 27.

Голосъ каждаго, по объявленіи, отмѣчается Прокуроромъ Синода въ избирательномъ списокѣ и удостоверяется собственноручною подписью избирателя. Когда всѣ присутствующіе Члены подадутъ уже голоса, то списокъ представляется Предсѣдательствующему въ собраніи, который, сосчитавъ голоса: особо избирательные и особо неизбирательные, записываетъ число оныхъ въ соотвѣтственныхъ графахъ избирательнаго списка № 2, противъ имени баллотированнаго кандидата.

§ 28.

Послѣ сего объявляется предстоящему собранію число избирательныхъ и неизбирательныхъ голосовъ и начинается избраніе другаго слѣдующаго за тѣмъ кандидата тѣмъ же порядкомъ, и такъ же остальныхъ двухъ кандидатовъ.

§ 29.

Когда баллотированъ старшій духовный членъ собранія; Предсѣдательствующій въ ономъ, тогда

считаетъ голоса, записываетъ ихъ и проч, какъ показано въ § 27, Старшій [по немъ изъ присутствующаго духовенства.

§ 30.

По окончаніи всего обряда избранія, читается гласно списокъ четырехъ избравшихся кандидатовъ, изъ коихъ двое, получившіе большее число голосовъ, почитаются кандидатами на санъ Верховнаго Патріарха.

§ 31.

Въ избирательномъ списокѣ четырехъ старшихъ кандидатовъ отмѣчается противъ двухъ изъ нихъ, что они, по большинству голосовъ, въ пользу ихъ данныхъ, удостоены кандидатами на званіе Верховнаго Патріарха. Этотъ избирательный списокъ подписывается всѣми членами собранія, участвовавшими въ томъ собраніи, удостоверяется Прокуроромъ и представляется кому слѣдуетъ. Копія съ означеннаго списка, подписаннаго членами Эчміадзинскаго Синода, скрѣпляется Секретаремъ онаго и остается при дѣлахъ Синода.

§ 32.

Кромѣ подписаннаго избирательнаго списка заготавливается особый журналъ объ избраніи Вер-

ховнаго Патріарха-Католикоса, въ двухъ экземплярахъ, который подписывается всѣмъ собраніемъ и скрѣпляется Секретаремъ Эчмиадзинскаго Синода. Одинъ изъ нихъ представляется куда слѣдуетъ, а другой остается при дѣлахъ Синода.

§ 33.

Во все продолженіе занятій собранія присутствіе происходитъ днемъ, начиная съ 9 часовъ утра до двухъ часовъ по полудни; вечеромъ же не бываетъ присутствія.

§ 34.

По окончаніи избранія и по подписаніи двухъ экземпляровъ избирательнаго списка и особаго журнала избранія собраніе отправляетъ депутацію изъ трехъ членовъ своихъ: одного духовнаго и двухъ свѣтскихъ къ Г. Главноначальствующему гражданскою частію на Кавказъ для дальнѣйшаго со стороны его дѣйствія согласно ст. 22-й ВѢЩАЮЩЕ утвржденнаго 26 Апрѣля 1883 года Учрежденія Управленія Кавказскаго края.

За Директора Канцеляріи Главноначальствующаго Гражданскою частію на Кавказъ

Вице—Директоръ Рогге

За Директора Канцеляріи Осѣцкіи

Տանկահայոց մասնակցութիւնը ամենայն Հայոց Կաթողիկոսական ընտրութեան.

Գիտենք որ Պօլօժենիայի 1120-րդ յօդուածի համաձայն իւրաքանչիւր թեմ կաթողիկոսի ընտրութեան համար տալիս է երկու պատգամաւոր՝ մէկը հոգևորական միւսն աշխարհական*) և համաձայն 1121-րդ յօդուածի՝ եթէ պատգամաւորը չէ կարող ներկայ լինել ս. Էջմիածնում ընտրութեան ժամանակ՝ իրաւունք ունի իւր կարծիքը զրաւոր ուղարկելու Սինոդին, ուրեմն համաձայն այդ նախատեսուած օրինաց յօդուածների Տաճկաստանի թեմերի պատգամաւորները պէտք է կամ անձամբ ներկայ լինին ս. Էջմիածնում ընտրութեան ժամանակ և կամ իրենց զրաւոր կարծիքն ուղարկեն Սինոդին:

Տեսնենք թէ վերջին կաթողիկոսների ընտրութեան ժամանակ ի՞նչ ձևով են մասնակցել Տաճկահայոց պատգամաւորները՝ արդեօք անձամբ թէ իրենց զրաւոր կարծիքն ուղարկելով և ի՞նչ հետեանք է ունեցել առաջին և երկրորդ դէպքում:

Սինոդի գործերից երևում է՝ որ Տ. Տ. Գէորգ կաթողիկոսի ընտրութեան ժամանակ

*) Տես սոյն դրքի էջ 11:

Տաճկահայոց բոլոր պատգամաւորներին ներկայացուցիչ եղել են հոգեւորականների կողմից ներսէս եպիսկոպոս Վարժապետեան, իսկ աշխարհականների կողմից Յակոբ աղայ Նորատունկեան, ուրեմն էջմիածին եկել են միայն երկու պատգամաւոր, իրենց հետ բերելով Տաճկահայոց կարծիքն ամփոփուած Կ. Պօլսի Պատրիարքի կողմից ուղարկուած առանձին Տեղեկագրի մէջ: Տաճկաստանից եկած երկու պատգամաւորների հետ մասնակցել են ընտրութեան Պարսկաստանի և Ռուսաստանի հոգեւորական և աշխարհական պատգամաւորներն և ընտրութեան ժամանակ եղել է 29 ընտրող կամ ձայն և Գէորգ կաթ. էլ ընտրուել է միաձայն 29 ձայնով:

Իսկ Գէորգ կաթ. մահից յետոյ նշանակուած կաթողիկոսական ընտրութեան մասնակցել են տաճկահայերը ներկայացուցիչ ունենալով էջմիածնում Մակար արքեպիսկոպոսին (կաթողիկոս): Այդ ընտրութեան ժամանակ Ռուսաստանի և Պարսկաստանի պատգամաւորների, Սինօղի անդամների և ընտրութեան իրաւունք ունեցող էջմիածնի միաբանութեան ձայների թիւն եղել է 32՝ տաճկահայոց ձայների ներկայացուցիչ Մակար արքեպիսկոպոսի մի ձայնի հետ միասին:

Տաճկահայերը, ինչպէս երևում է զործից, կարծել են թէ նշանակուած ներկայացուցիչը կարող է իրենց կաթողիկոսական թեկնածուներին անցկացնել այնքան ձայնով, որքան ձայ-

նով իրենց երեսփոխանական ժողովում ընտրել են՝ սակայն երևում է՝ որ նրանք կարողացել են իրենց թեկնածուներին միայն քառանուն ցանկի մէջ մտցնել համաձայն օրինաց, իսկ երբ քառանուն ցանկից ընտրել են կաթողիկոսական աստիճանի արժանի երկու թեկնածուներ՝ այդ ժամանակ համաձայն կաթող. ընտրութեան կանոնների 25 յօդուածի *) ընտրութեան իրաւունք ունեցել է միայն ժողովին անձամբ ներկայ եղողն և բացակայ պատգամաւորների կարծիքը չէ ընդունուել ի հաշիւ ձայների, որի հետեւանքն է եղել այն, որ ամենայն Հայոց կաթ. ընտրութեան ժամանակ իրականապէս (de facto) տաճկահայերն ոչ մի մասնակցութիւն չեն ունեցել: Գէորգ կաթողիկոսի ընտրութեան ժամանակ զոնէ եկած երկու պատգամաւորների միջոցով ունեցել են 2 ձայն, իսկ մահից յետոյ նշանակուած ընտրութեան ժամանակ, երբ ընտրուեց Վարժապետեանը, տաճկահայերը չեն ունեցել և ոչ մի ձայն, որովհետեւ ներկայացուցիչ եղել է Ռուսաստանի եպիսկոպոսներից Մակար արքեպիսկոպոսը նրանց զբաւոր յանձնարարութեան համաձայն, որն իբրև Սինօղի անդամ-տեղապահ մի ձայն ինքն ունէր, իսկ տաճկահայոց ձայների ներկայացուցչութիւնը չէ արտայայտուել և ոչ մի բանով, այլ եղել է միայն ձեւական և մի ձայն տալով՝ ստորագրել է «Տե-

*) Տես էջ գրքիս 48:

զակալ Ատենապետի Սինօղի և ներկայացուցիչ կարծեաց տաճկահայոց»:

Ներսէս եպիսկ. Վարժապետեանը և պ. Նորատունկեանը Գէորդ կաթողիկոսի ընտրութեան ժամանակ մի մի ձայն տալով առաջարկուած թեկնածուին՝ ստորագրել են առաջինը այսպէս. «Ես պատգամաւորս ի զիմաց համայն եկեղեցականաց ամենայն վիճակացն ս. էջմիածնի և կաթողիկոսութեանց Սսոյ և Աղթամարայ և Պատրիարքութեան սրբոյ Երուսաղէմի ըստ հրահանգին տուելոյ ինձ յազգային ժողովոյ Պատրիարքութեան Կ. Պօլսոյ՝ ընտրեցի կաթողիկոս ամենայն Հայոց և Մայրազոյն Պատրիարք Համազգական Մայր Աթոռոյ Արարատեան Սրբոյ էջմիածնի՝ զամենապատիւ զՏէր Տէր Գէորդ սրբազան արքեպիսկոպոսն Պրուսայու, և ոչ զոք կանգիդատ»:

Իսկ պ. Նորատունկեանը ստորագրել է. «Նոյնպէս և ես պատգամաւորս ի զիմաց ամենայն ժողովրդականացն վերոյիշատակեալ վիճակաց կայսերութեանն Տաճկաստանի ընտրեցի կաթողիկոս զՏէր Գէորդ սրբազան արքեպիսկոպոսն Պրուսայու և ոչ զոք կանգիդատ»:

Իսկ Խրիմեանի ընտրութեան ժամանակ մասնակցել են տաճկահայոց պատգամաւորները անձամբ՝ բացառութեամբ փոքրամասնութեան, և անձամբ մասնակցողներին թիւն է եղել թէ Ռուսաստանից և թէ Տաճկաստանից ու Պարս-

կաստանից 72 և Խրիմեանն էլ ընտրուել է միաձայն 72 ձայնով: Ուրեմն ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութիւնը համազգային կը լինի այն ժամանակ, երբ յիրաւի տաճկահայոց պատգամաւորներն անձամբ մասնակցեն ընտրութեան ռուսահայոց հետ միասին, այլ կերպ ընտրուած կաթողիկոսը կը լինի միայն ռուսահայոց ցանկացածը և ոչ ամենայն Հայոց, քանի որ առայժմ տիրող օրէնքի համաձայն կաթ. երկու թեկնածուների ընտրութեան ժամանակ ձայն ունին միայն ներկայ գտնուող պատգամաւորները:

Ի՞նչպէս են մասնակցել Տաճկահայերը կաթ. ընտրութեան՝ երբ իրենց պատգամաւորներին չեն ուղարկել էջմիածին.

Գէորդ կաթ. մահից յետոյ, երբ նշանակուում է կաթ. ընտրութիւն, Կ. Պօլսի պատրիարք Ներսէս Վարժապետեանը գրում է 15 Յունվարի 1883 թուով Տեղակալ Մկրտիչ արքեպիսկոպոսին (Բարամեանց), խնդրելով ուղարկել այն բոլոր կանոնները, ինչ որ կայ կաթ. ընտրութեան և այլ կարգերի առթիւ, բայց չստանալով պատասխան՝ կրկնում է նոյն տարուայ Մայիս ամսին, բայց էլի մնում է անպատասխան, ինչպէս երևում է զործից երբորդ անգամ նա գրում է Մահար արքեպիսկոպոսին, իբրև Տեղակալի, որովհետև վերջինս այդ միջոցներում

Սինօզի անդամ հաստատուելով՝ փոխարինում է ըստ օրինի Մկրտիչ արքեպիսկոպոսին:

Իսկ երբ Կ. Պօլսի պատրիարք վարժապետեանը տեղեկութիւն է ստանում էջմիածնից, որ կաթողիկոսական ընտրութիւն նշանակուած է 1884 թ. Մայիսին՝ իւր 1-ն Յունվար 1884 թ. համար 189 զրութեամբ յայտնում է Տեղապահ Մակար արքեպիսկոպոսին հետեւեալը. «..... Արդ՝ Ազգային ժողովն Հայոց ի թ, ժ, ժԱ. և ժԲ-րդ զուամբմունս իւր անդ հազար ութ հարիւր ութսուն և երեք ամի շրջանի ի նկատումն առեալ զխնդիր կաթողիկոսական ընտրութեան՝ յետ լուրջ և խոհական խորհրդածութեանց յօգուտ եկեղեցւոյ և Ազգի, վճռեաց զի ըստ ձև օրինակի հազար ութ հարիւր վաթսուն և վեց ամի մասնակցեսցի ընտրութեան Հայրապետին ամենայն Հայոց:

Սոյն այս վճիռ Ազգային ժողովոյն, որ հիմնեալ է ի վերայ Ազգային Սահմանադրութեան Տաճկաստանեայց Հայոց, որպէս յայտ է Ձերումից Բարձր Սրբազնութեան և Սրբոյ Սինօզիդ, արդէն իսկ ընկալեալ է և ի հզօր պետութենէ անտի Ռուսաց, առանց զիտողութեան իրիք ի ժամանակի ընտրութեան տրժանայիշատակ Տ. Տ. Գէորգայ չորրորդի ի կաթողիկոսութեան ամենայն Հայոց յամի Տեառն հազար ութ հարիւր վաթսուն և վեց»:

Վարժապետեանի այս զրութիւնից պարզ երևում է, որ տաճկահայերը վճռել են կա-

թուղ. ընտրութեան մասնակցել 1866 թուի ընտրութեան մասնակցելու ձևով, այսինքն Գէորգ կաթ. ընտրութեան ժամանակի, նախօրօք Պօլսում կայացնելով կաթ. թեկնածուների ընտրութիւնը, և ուղարկելով իրենց ներկայացուցչին էջմիածին, որ վերջինս արդէն ընտրուած թեկնածուներին անցկացնի ընտրելիների ցուցակի մէջ:

Երբ Սինօզում ստացւում է վարժապետեանի յիշեալ թուղթը, էջմիածնի միաբանութիւնը չէ ընդունում տաճկահայոց յիշեալ ձևի մասնակցութիւնը կաթ. ընտրութեան և կամենում են, որ նրանք իրենց պատգամաւորներին ուղարկեն էջմիածին, անձամբ մասնակցելու: Այդ առթիւ մի պատճառաբանուած զրութիւն են ուղարկում Կ. Պօլսի Պատրիարքին, որի պատճէնն այստեղ առաջ ենք բերում:

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԹՈՒՂԹԸ Կ. ՊՕԼՍԻ ՊԵՏՐԵՐԲ ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԵՆ.

Նորին Ամենապատիւ Սրբազնութեան Պատրիարքի Հայոց Կ. Պօլսոյ Տեառն Ներսիսի Գեորգօճ Արհի եպիսկոպոսի

Ձզրութիւն Ամենապատիւ Սրբազան Տեառնդ, տողեալն ի 1-ն Յունվարի տարւոյս ընդ համարաւ 189 յանուն Ամենապատիւ կաթողիկոսական Տեղապահի և Սրբազան Հարց Սինօզակահանցն՝ ընկալաւ Սինօզն Սրբոյ էջմիածնի, որ և

ընթերցեալ եղև ի համագումար ժողովի անդ Միաբանական Ուխտի Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, որոյ և բովանդակութեանն քաջապէս խելամուտ եղեալ, առ որ Միաբանական Ուխտս մեր հարկ ինքեան համարի ամենախոնարհաբար յայտնել Սրբազան Տեառնդ և Ձեօք Ազգային երեսփոխանական ընդհանուր պատկառելի ժողովոյն զիւրն համեստ կարծիս և զիրաւացի նկատողութիւնս:

Մինօդն Սրբոյ Էջմիածնի յետ ցաւօք սրտի ծանուցանելոյ ընդհանրութեան Ազգիս զոիրահրաւէր փոխումն յաստեացս Սրբազնակատար Վեհափառ Հայրապետի և Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տ. Տ. Գեորգայ Գ-ի, ապաքէն առ ի անվթար պահպանելոյ զգարաւոր ժամանակեայ առ մեզ հասեալ նախնաւանդ սովորութիւնս և զնուիրական սկզբունս կաթուղիկոսական համագգային ընտրութեան, մանաւանդ զի միաբանական բուն համերաշխութեամբ թերևս առաւել ի լաւագոյն անդր նպատակ թեակոխել մարթասցի, փութացաւ ըստ թուոյ ի Պատրիարքաբանէն ցուցեալ վիճակաց առաքել ուրոյն ուրոյն զծանուցողական հրովարտակս, յորս և նշանակելով զօրն ընտրութեան, հրաւիրեաց զարժանայարգ եկեղեցական և զաշխարհական մի մի պատգամաւորս ի զիմաց իւրաքանչիւր վիճակի, զալ և ժողովել ի Մայր Աթոռս Ս. Էջմիածնի ի համագումար ժողովի անդ ազգային խուռն պատգամաւորաց

ի Տաճարի Սրբոյ Միածնախիջի, առնել զնորոգ ընտրութիւն արժանաւորի ուրուք յԱթոռ Հայրապետութեան Հայաստանեայց և յաջորդութիւն Մեծի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, ոչ զի այնու զնոր իմն օտարոտի նորալուր ընտրողական եղանակս և կարգս առաջարկելով, քան միշտ առաջարկեալ է յաւուրս ընտրութեանց երանաշնորհ հանդուցեալ Հայրապետացն ազգիս ներսիսի, Մատթէոսի և Գեորգայ, եթէ ոչ զանցեալսն զամենեսին՝ զէթ զվերջին երկուս ընտրութիւնս որ ի Ձերոյ ժամանակցաց է գործ, եղաք առաջի Սրբազան Տեառնդ զօրինական զայնոսիկ:

Ձի եթէ ի նախանցեալ ժամանակս յայդպիսի զէպս լեալ են ակամայ խտտորումն և շեղումն ի նախնաւանդ ազգային սովորութեանց, այդոքիկ են բայց միայն տարադէպ բերմունք պատմական տխուր անցելոյ և զիպուածական բացառութիւնք. որք՝ զի եթէ մեք զարգիս ի մի յօդ ազգային սիրոյ և միաբանութեան լծորդեալք յառիցեմք ի միակ շահ ազգիս լրութեան և Սրբոյ Մայր Աթոռոյս՝ միանգամայն չկարեն բնաւին խախտել զհիմնական նախնաւանդ սրբազան սկզբունս համագգային ընտրութեան, և ոչ եղանակն ընտրութեան 1866 ամի՝ զորմէ որպէս յիշէք ի զրութեան Ձերում կարէ լինիլ օրինակ, կամ ձեռնարկ հրահանգութեան և ի ներկայիս. «Եղանակ ընտրութեան» ասելով՝ ոչ զի բանք մեր են զառաւելազանցութենէ ձայ-

նից Վիճակաց Հայոց Թուրքիոյ, զորս ի սէր ազգային շինութեան և խաղաղութեան խորին հպատակութեամբ, ջերմեռանդն համակրութեամբ և քաղաքագիտական իմն խոհականութեամբ մեք ամենեքեանս միմիայն ընդունիմք և յարգեմք և յարգեսցուք, բայց ոչ տիրող Պետութիւնն, որպէս կարծէ Սրբազնութիւնդ, զորմէ և յիշէք ի գրութեան Ձերում, զի մերթ ընդ մերթ յաճախեալ ի Սինօզն պաշտօնական թրղութեանքն զայդ բան ընդհակառակն հաւաստեն, որպէս յանցելումն, նոյնպէս և ի ներկայիս: Այլ թէ, Միաբանական Ուխտս մեր զեղանակ ընտրութեան 1866 ամի գտանէ գլխովին անհամապատասխան բուն ողւոյ սկզբանց և կանոնաց Համազգային ընտրութեան և ճիշտ օրինաւորութեան՝

Նախ զի՝ եթէ ի սկզբանէ անտի ի դարաւոր ժամանակաց հետէ հրաշափառ Տաճարն Սրբոյ Էջմիածնի ի Վաղարշապատ ճանաչի կաթողիկէ և Մայր Եկեղեցեաց Հայաստանեայց, և Նստեալն ի Գերագահ Աթոռս Վեհափառ Հայրապետն ազգիս իբրև օրինաւոր արժանաժառանգ Աթոռակալ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, ապաքէն ըստ իրաւանց և արդարութեան և ըստ օրինաց Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ նա մանաւանդ ըստ Վսեմութեան համազգային նշանաւոր գործոյս սահմանադրեալ է և հարկ և արժան իսկ է, ապա ուրեմն ընտրեալ ազգային պատուարժան պատգամաւորաց

մէն մի վիճակաց զալ ի մի վայր ժողովիլ յԱրարատեան Մայր Աթոռս և յետ նախապէս անձամբ ընդ իրեարս խորհելոյ և խօսելոյ զդրութենէ ազգային Սրբոց մեծի տանս և զկարեւորաց ընտրութեան առարկայից, յառաջագոյն ունելով ի նկատի զընտրելի արժանաւոր անձանց զանուանս, ապա համերաշխ սիրով և միաբանութեամբ անաչառապէս ձեռնարկել յընտրութիւն նորոգ կաթողիկոսի ազատ և անբռնադատ քուէարկութեամբ, որպէս զի այնու մի՝ կատարել խղճի մտօք զստանձնեալ պարտիս իւրեանց, և երկրորդ՝ յաչս օտարաց և ազգայնոց մերոց յարգել և բարձրացուցանել զվեհ նշանակութիւն ընտրեալ Մայրագոյն և Ընդհանրական Կլխոյ Հայաստանեայց Ազգի և Եկեղեցւոյ:

Երկրորդ, նոյնպիսի անցեալ ընտրողական ձեռնարկութիւնն երեսփոխանական ընդհանուր ժողովոյ է բացարձակապէս տարօրինակ և տարականն իմն գործողութիւն, զի պատուարժան անդամք ժողովոյն այնորիկ ըստ տրամադրութեան տեղական ազգային Սահմանադրութեան՝ եթէ են և համարին իբրև ընտրեալ և երաշխաւորեալ երեսփոխանք ի զիմաց գաւառական ազգայնոց մերոց, որ ի Թուրքիա, Թերևս չհամելով մեր մտանել ի մանրամասն լուսաբանութիւն իրաւանց և արտօնութեանց և շրջանի գործողութեանց նոցին, եթէ յոր դէպս՝ ցոր գործողութեանց նոցին, եթէ յոր դէպս՝ ցոր աստիճան են, զիտելով զայն ամենայն քաջա-

պէս՝ միայն զայս բան խորին հանդարտութեամբ կամիմք յիշել աստանօր, զի մինչ ըստ ազգային Սահմանադրութեան տեղւոյդ Երեսփոխանական ընդհանուր ժողովն յընտրութիւնս Մայրազոյն Պատրիարք կաթողիկոսի ամենայն Հայոց ունի զբացարձակ իրաւունս և արտօնութիւնս մասնակցելոյ, և այն ոչ այլ ուրեք, բայց միայն ի Համագումար Համազգային ժողովի աստ ի Ս. Էջմիածին, զորպիսի իրաւունս և եթ միայն ստորասեմք, բայց բացասեմք և ժխտեմք պատկառելի ժողովոյն զվերապահութիւնն նաև ընտրողականն քուէարկութեան իրաւանց այդր ի Կ. Պօլիս, որ հակառակ իսկ է թէ նախնաւանդ մերոց կանոնաց և թէ բուն սկզբանց տեղական ազգային Սահմանադրութեան, զի այնուհետև եկեալ պատգամաւորք Հայոց Թուրքիոյ հրահանգեալ ի ժողովոյն և օժտեալ միահաղոյն ի 130 ձայնից և քուէից զրեթէ վճռական և վերջնական զօրութեամբք, աստանօր զարտաքին և եթ կատարեն զձեականութիւն, ոչ զի նոքա զընտրելին՝ այլ արդէն զընտրեալն ի կաթողիկոսութիւն առաջարկեն ժողովոյն Ս. Էջմիածնի, այն է պատգամաւորացն Հայոց Ռուսաստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի, զորոց և ընտրողական ազատ ձայնս յայդ զէպս առ ոչինչս համարեալ և զրեթէ իսպառ պարաւանդեալ ի խորին լռութիւնս, զերեսփոխանական ժողովոյդ մասնաւոր կարծեցեալ ընտրութիւնն յանուն Համազգային Համագումար ժո-

ղովոյ Ս. Էջմիածնի տան վաւերացուցանել ներկայ հանդիսականացն, որպիսի տարականնութիւն և բացարձակ ոտնահարութիւնքն զարաւոր սրբազան աւանդութեանց՝ ահա յայնմիկ իսկ ազգային վեհազոյն նուիրական զործողութիւնս կաթողիկոսական ընտրութեան նկատեցան յամին 1866: Ուստի ամփոփելով աստէն զբանս մեր, ամենախոնարհաբար խնդիր է Ուխտի Միաբանութեանս ի ձէնջ ի Սրբազան Տեառնէդ մերմէ, զի զայն ամենայն ի վեր անդր բացատրեալ արդարացի նկատողութիւնս մեր ծանուցեալ ի զիտութիւն Երեսփոխանական պատկառելի ժողովոյն, յորում և Սրբազան Տէրութիւն Ձեր զգահերիցութեան ունիք զաթոռփութասցուք լծորդիլ ի մի յօդ միակամութեան և ազգային անարատ զգացմամբ յարգել և պաշտպանել թերևս զառ ի նախնեաց անտի առ մեզ հասեալ զաւանդն սուրբ համազգային ընտրութեան և զցանկ հայրենեաց մերոց ևս առաւել հաստահիմն առնել ի շինութիւն և ի պայծառութիւն և ի բարօրութիւն ազգի մերոյ և եկեղեցւոյ՝ առ որս են, յուսամք, բուն նախանձախնդիր նկրտմունք մեր ամենիցս ազգովին: Իսկ եթէ ոմանք ի պատուարժան պատգամաւորաց Հայոց Թուրքիոյ, ըստ ինչ ինչ անամաւորաց Հայոց Թուրքիոյ, ըստ ինչ ինչ անակնկալ պատճառանաց, անկարող զացին անձամբ զալ ի ժամանակին ի Մայր Աթոռս և մասնակցեալ յընտրութիւն նորոգ կաթողիկոսի, — ըստ յեղ յընտրութիւն նորոգ Սրբոյ Էջմիածնի առաքեալ առ հա-

մօրէն Վիճակս Ծանուցողական հրովարտական
հրահանգութեանց, որպէս օրինաւորութիւնն
իսկ պահանջէ,—հարկ է նոցա ուրոյն ուրոյն
զբաւոր վաւերական թղթովք պատգամաւորու-
թեանց իւրեանց ի կողմանէ ընտրող Վիճակացն,
ընդ ձեռն Սրբազան Տեառնդ մինչ ցօրն ընտրու-
թեան յայտնել զբացարձակ կարծիս իւրեանց
Սինօզին Սրբոյ Էջմիածնի, զի ի ժամ համա-
գումարման ընտրող ազգային ժողովոյ առնուլ
զայն ամենայն ի նկատողութիւն և ի կիրառու-
թիւն: Ըստ այնոցիկ կարեւորագոյն իրաց, զոր
ինչ Սրբազան Տէրդ մեր արժան համարի տնօ-
րինել, բարեհաճեցի տալ և զճանօթութիւնս
զհետեանայն միջոցաւ Սինօզին Սրբոյ Էջմիածնի,
Միաբանական Ուխտի Մեծի Մայր Աթոռոյս*):

(Ստորագրուիւնք միաբանից)**).

Ի 1 ն Փետրուարի 1884 ամի
Բ Ս. Էջմիածին.

*) Սրարատ 1884, Փետրուար:

***) Ստորագրել են 10 եպիսկոպոս, 18 վարդապետ և 4 սարկաւազ:

Կ. Պօլսի Ներսէս Արեւիսկոպոս Վարժապետեան Պատրիարքի Թուղթը Տեղակալ Մակար Արեւիսկոպոսին.

Վարժապետեանը ստանալով Էջմիածնի 32 միաբանների զբաժ թուղթը, որ վերեւում առաջ բերինք, իսկոյն հեռագրում է Տեղակալ Մակար Արքեպիսկոպոսին հետեւեալը. «Ստացուեցաւ Էջմիածնի Միաբանութեան Փետրուարի 1-ի թուղթը: Մեր Փետրուարի 11-ի զբաժը բաւական պատասխանում է: Մենք պատրաստ ենք մեր միտքը բացատրելու աւելի երկար»:

Փետրուարի 11-ի զրութիւնն այն է, որ Վարժապետեան Պատրիարքը նախ քան Էջմիածնի Միաբանութեան 1-ն Փետրուարի (նոյն տարուայ 1884 թ.) թուղթ ստանալն իւր և Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովի կողմից մի ընդարձակ պատճառաբանուած թուղթ է գրում Էջմիածին Տեղակալ Մակար Արքեպիսկոպոսին, բացատրելով մանրամասն թէ ինչո՞ւ իրենք պէտք է և այդ անգամ առաջնորդուեն 1866 թուի կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու եղանակով, և հարց բարձրացնելով նաև թէ ինչո՞ւ Սինօզը չէ ճանաչում Սսի, Երուսաղէմի և Աղթամարի ստորագրեալ թեմերը:

Վարժապետեանի 11-ն Փետրուարի զբաժ

Թուղթը Էջմիածնի Տեղակալին խիստ հետաքրքրական լինելով ըստ էութեան շօշափած մի քանի կարևոր խնդիրների նկատմամբ՝ այստեղ առաջ ենք բերում նորա հարազատ պատճենը *):

Ամենապատիւ Տէր Մակար Սրբազան Արքեպիսկոպոս արժանընտիր Տեղակալ Կաթողիկոսութեան Արար ստեան Մայր Աթոռոյ Կաթողիկէ Սրայ Էջմիածնի.

Ամենապատիւ Սրբազան Եղբայր ի Քրիստոս.

Ի պատասխանի պաշտօնական գրութեան մերոյ որ ի 1 ամսեանն Յունուարի այսր ամի ընկալաք զհեռագիր Ամենապատուութեան Ձերոյ 7 Փետրուար—ի 26 Յունուար, որով ծանուցանէիք եթէ Սինոդն առաքեալ է արգէն յ30 Սեպտեմբերի անցելում 1883 ամի ընդ համարաւ 3091 զհրաւիրագիր ընտրութեան նորոյ Հայրապետի ամենայն Հայոց:

Անագան ուրեմն ի 29 ամսեանն Յունուարի այսր ամի աւանդեցաւ մեզ նոյն գրութիւն հրաւիրանաց Պատուական Սինոդին, որ և ընթերցաւ յԱզգային երեսփոխանական ընդհանուր Ժողովի յԺԹ-ըդ գումարման անդ նորա, ի տասներորդում աւուր ամսեանն Փետրուարի:

*) Տես Գործ Սինոդի 1882 թ. № 137:

Սովին այսու գրութեամբ իւրով Սինոդն ծանուցեալ զվախճան և զթաղումն արգիւնաշատ Տեառն Տեառն Գէորգայ չորրորդի Հայրապետին ամենայն Հայոց, և առաջի արարեալ զպատճառս յետաթողման աւուր ընտրութեան նորոյ Կաթողիկոսին մինչ ցեօթն ամսեանն Մայիսի տարւոյս այտրիկ, յանձն առնէր ինձ տալ ընտրել Հայասերից Մայրաքաղաքիս Կոստանդնուպոլսոյ զաշխարհական ոք պատգամաւոր, և հրաւիրէ զիս ընդ պատգամաւորին ընդ այնմիկ գտանել այդր ի Ս. Էջմիածին յեօթներորդում աւուր ամսեանն Մայիսի ի մասնակցութիւն ընտրութեան նորոյ Հայրապետին ի զիմաց հոգևորականաց և ժողովրդականաց Հայոց որ ի Մայրաքաղաքիս:

Սինոդն ընդ գրութեանս ընդ այսմիկ առաքեալ է յայս առաջին նուագ՝ հրաւիրագիրս քառասուն և երիս յանուն քառասուն և երկից վիճակաւորաց և եթ թուրքաբնակ Հայոց, խընդրելով ի մէնջ՝ զի առաքեսցուք զնոսին առ նոյն թեմակալ Առաջնորդս, յորոց անուն ուղղեալ է նամականին, որպէս զի և իւրաքանչիւրն ի նոցանէ յանուն թեմի իւրոյ տացէ պատգամաւորս երկուս՝ զմին եկեղեցական, և զմին աշխարհական, ասելով. «Իսկ յաղագս ընտրելոյ զաշխարհական պատգամաւորս ի զիմաց Հայազնեայ ժողովրդոց և պատգամաւորաց հոգևորաց ամենայն Հայաբնակ վիճակաց Օսմանեան պետունայն Ս. Էջմիածնի հաղորդէ ահա աթեան Սինոդս Ս. Էջմիածնի հաղորդէ ահա ա-

առջնորդաց այնոցիկ վիճակաց առանձին առան-
ձին ծանուցագրովք»:

Եւ թէ «Ընդ սմին Սինոդս զվերոգրեալ ծա-
նուցագիրսն առաքեալ ուղղակի առ Ամենապա-
պատիւ Արքայնութիւն Չեր ըստ նախնաւանդ
սովորութեան՝ խնդրէ հասուցանել զայնս առ
առաջնորդս վիճակաց, որք ընդ Տեսչութեամբ
Չերով գտանին»:

Նախնաւանդ սովորութիւն զորմէ Սինոդն
խօսի, անձանօթ է մեզ բոլորովիմբ, և որպէս
ի վեր անդր ասացաք, զայս առաջին անգամ
տեսանեմք ի կիր արկեալ ի նմանէ, վասն որոյ
ի դէպ ևս է կոչել զայն նորասկիզբն, քան թէ
նախնաւանդ: Եւ արգարե Ի 1836 ամէ հետէ
ի հաստատութենէ ասեմք անտի նորոյ կարգա-
դրութեան (պալաժենիայի) ի Ռուսաստան, թէ և
զվախճան կաթողիկոսաց, որպէս և զժամանակ
նորոյ ընտրութեան ծանուցեալ է Սինոդն Պատ-
րիարքարանիս, սակայն սմա յանձնեալ է տեղե-
կացուցանել զթեմակալ առաջնորդս Տաճկաս-
տանեայց, և հրաւիրել զնոսա ի մասնակցութիւն
նորոյ ընտրութեանն: Այսպէս ահա և ի 1865
ամի Սինոդն պաշտօնական զրութեամբ իւրով
որ ի 11 ամսեանն Սեպտեմբերի 1865 ամի ընդ
համարաւ 1616, ծանուցեալ զվախճան արժա-
նայիշատակ Տեառն Տեառն Մատթէոսի կաթո-
ղիկոսի, որպէս և զօր ընտրութեան յաջորդին,
յանձն առնէ Պատրիարքին կոստանդնուպօլսոյ
Տեառն Պօղոսի հոգեւոյս Արքեպիսկոպոսի, հա-

զորպէլ զայն վիճակաւոր առաջնորդաց, որպէս
զի մասնակցեցեն նորոյ ընտրութեան, ասելով
այսպէս. «Արքայնութիւն Չեր զայսմանէ
պարտի հրատարակել և ընդ համայն վիճակս
հաւատացեալս Չերում Հովուապետութեան,
որպէս զի իւրաքանչիւր ոք ի վիճակաւոր Առաջ-
նորդաց կամ ինքնին շնորհաբեր լիցի այսր
յԱթոռ ցնշանակեալն ժամանակ ընտրութեան
Հայոց կաթողիկոսի կամ հաւատացէ զպաշ-
տօնն այլում ումեք յեկեղեցականաց, զոր նայն
գատէ նմին արժանի»:

«Սկ յազագս ընտրելոյ զաշխարհական պատ-
գամաւոր ի դիմաց բոլոր Հայաբնակ քա-
ղաքաց Օսմանեան պետութեան առ ի մասնակ-
ցութիւն յընտրութիւն նորոյ կաթողիկոսի,
զրեցաք ահա զոյդ ընդ սմին առանձինն Քաղա-
քական Ժողովոյն Հայոց որ այլը»:

Ահաւասիկ տեսանէ Չերդ Ամենապատու-
թիւն, զի ոչ ըստ ասից Սինոդին՝ նախնաւանդ է
սովորութիւնն, այլ նոր ամենայնիւ, առաքելոյ
առ մէն մի թեմակալս Հայոց Տաճկաստանեայց
հրաւիրազիրս ի Ս. Էջմիածնէ ի մասնակցութիւն
ընտրութեան նորոյ կաթողիկոսի:

Եւ արգարե այսմ այսպէս պարտ էր լի-
նել, զի Պատրիարքն Հայոց կոստանդնուպօլսոյ
գլով փոխանորդ ընդհանրական Հայրապետին
ամենայն Հայոց ի Տաճկաստան, ինքն միայն է
միջնորդ ընդ Աթոռն Սուրբ և ընդ Ուխտ եկե-
ղեցոյն Հայաստանեայց որ ի Թուրքիա: Վասն

որոյ Ինքն է որ յանուն Թեմական Եկեղեցեաց Հայորերոյս տայ զընծայական ի ձեռս առաջնորդ վարդապետաց առ Հայրապետն Սուրբ ի ձեռնադրութիւն եպիսկոպոսութեան: Ինքն է որ ի հաղորդակցութեան է ուղղակի ընդ ընդհանրական Հայրապետին՝ յանուն Կրօնական և Վաղաքական ժողովոց, և նոյն իսկ յանուն Ազգային Երեսօխոսանական Ընդհանուր ժողովոյն, որ որպէս յայտ է Չերումի Սրբազնութեան, օրինաւոր ներկայացուցիչն է Թուրքիաբնակ Հայոց բովանդակ:

Ահա նոյն ինքն Ս. Հայրապետն որոյ էր և է իշխանութիւն իբրև Հօր հասարակաց մտանել ի հաղորդակցութիւն ուղղակի ընդ հօտն իւր, հաւատացեալ նմա ի Տեառնէ և յԵկեղեցւոյն Հայաստանեայց, ուր ուրեք և գտանիցի, սակայն ի հնոց ժամանակաց անտի, երբ կամեցեալ է շնորհակիր կոնդակաւն օրհներ կամ պատուէր ինչ հրամանի տալ Հայոց Տաճկաստանեայց— իւրոց հարազատ որդւոց, միշտ և հանապազ ուղղեալ է զայն առ Պատրիարքն Կոստանդնուպօլսոյ, և ի ձեռն նորա հաղորդեալ է զիւր բարձր պատուէր Հայրապետական առ հօտն իւր սիրելի:

Արդ՝ եթէ և ընդհանրական կաթողիկոսունք անգամ ի նկատումն առեալ զքաղաքական կացութիւն Տաճկաստանեայց Հայոց, հեռատես շրջահայեցողութեամբ ջանան ըստ կարելոյն չմտանել յուղղակի հաղորդակցութիւն

ընդ ժողովուրդս և ընդ առաջնորդս Տաճկաստանեայց Հայոց, կաթողիկոսունք ամենայն Հայոց ասեմք՝ զորս ճանաչէ պաշտօնապէս Պետութիւնն Օսմանեան, զիմորդ այսօր Սինոզն ձեռներէց լինի մտանել ի զբաւոր հաղորդակցութիւն ընդ Թեմակալ Առաջնորդս և ընդ ժողովուրդս Հայոց, որ ի Տաճկաստան, պահանջելով ևս՝ զի ի ձեռն «տեղական պետական քաղաքական իշխանութեանց» հաղորդեսցեն շրջաբերականք իւր, մինչդեռ տեղական պետական իշխանութիւնն չճանաչէ զնա բնաւ, և նոյն իսկ Եկեղեցին Հայաստանեայց, որ ի Տաճկաստան, ճանաչէ զնա և մեծարէ իբրև ժողով հոգևորական ի տնօրէնութիւն հոգևոր գործոց Եկեղեցւոյն Հայաստանեայց՝ որ ի Ռուսաստան և եթ. որպէս է և մերս Կեդրոնական Կրօնական ժողով, որ ընդ նախագահութեամբ Պատրիարքին Կոստանդնուպօլսոյ յաճանձէ զգործս հոգևորականս Եկեղեցւոյն Հայաստանեայց, որ ի Տաճկաստան, չունելով բնաւ յաւանութիւն մտանել ի հաղորդակցութիւն ուղղակի կամ անուղղակի ընդ որ և իցէ վիճակ Օտարասահման Հայոց, թէև որ և իցէ զթափուր գտանիցի Աթոռն Կոստանդնուպօլսոյ ի Պատրիարքէ իւրմէ:

Սինոզն և ի թիւ անդ շրջաբերականացն զորձէ և այլ իմն թերութիւն, որոյ ծանր են յոյժ հետևանք: Թիւ շրջաբերականացն ուղղելոց առ Առաջնորդս կողմանց մերոց է քառասուն և երեք, որք են՝

1. Թէքիրտաղ
2. Աղբիւնուպօլիս
3. Վառնա
4. Դանուբեան իշխանութիւն (Մուլղովալաքիա)
5. Տրապիզոն
6. Ճանիկ
7. Շապին-Գարահիսար
8. Թամզարա և Ածպտեր
9. Ամասիա և Մարգուան
10. Եւզոկիա
11. Սեբաստիա
12. Կարին
13. Վան
14. Լիմ և Կտուց անապատք
15. Բասեն
16. Պայազիտ
17. Մուշ
18. Քղի
19. Բաղէշ
20. Դերջան
21. Բաբերդ
22. Երզնկա
23. Չնքուշ
24. Բալու
25. Չար-սանճաղ
26. Խարբերդ
27. Խուլէ վանք և Չմշկաճաղ
28. Արաբկիր
29. Ակն

30. Քէմախ
31. Արզնի
32. Կեսարիա
33. Տիգրանակերտ
34. Քրդաստան
35. Եղեսիա
36. Պաղտատ
37. Գաղատիա
38. Չմիւռնիա
39. Եզիպտոս և Կրետէ
40. Պանտրմա
41. Կուտինա
42. Պրուսա
43. Նիկոմիդիա

Ի թուարերութենէ աստի յայսմանէ երեւի թէ Սինոզն ընդունի բաց ի Պատրիարքական Աթոռոյ Կոստանդնուպոլսոյ զվերոյնշանակեալ քառասուն և երիս վիճակս և եթ չայոց ի Տաճկաստան, սակայն առաջնորդական վիճակք Եկեղեցոյն Հայաստանեայց ի Տաճկաստան են վաթսուն և չինգ, որպէս արդէն հոգելոյս Պատրիարքն Կոստանդնուպոլսոյ Տէր Պօզոս Արքեպիսկոպոսն ծանուցեալ է կանխաւ Սինոզին ի 1866 ամի ի 26 ամսեանն Օգոստոսի, ի ժամանակս նորոյ ընտրութեան Կաթուղիկոսի, յանուն ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովոյն թուրքիարնակ Հայոց: Քանզի կարծել թէ Թեմական վիճակք Հայոց, որ ընդ Հովուապե-

տութեամբ մեծի Հայրապետին և Ծայրագոյն Պատրիարքին Կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի, ի Տաճկաստան իցեն այնք և եթ որ կան ընդ ուղղակի իրաւատութեամբ Պատրիարքին Կոստանդնուպօլսոյ, է մեծ իմն և աններելի սխալանք: Թողեալ զի այսօր նոյն իսկ յետինքս այսօրիկ վիճակք ընդ Պատրիարքութեանն Կոստանդնուպօլսոյ են թուով քառասուն և Հինգ. ըստ որում թէ և յետ վերոյիշեալ թուաբերութեանն 1866 ամի ի բաց ելեալ է անտի վիճակն Կարուց, սակայն փոխանակ ընդ այնր Պիլէճիկ որ կայր ընդ առաջնորդութեամբ Կուտինայ, այսօր կազմէ առանձին իմն առաջնորդութիւն, յորոյ վերայ նոյն ինքն հոգեւոյս Հայրապետն Տ. Տ. Կէորզ շորրորդն ձեռնադրեալ է եպիսկոպոս ի 1880 ամի, որպէս և զիտակ իսկ է Սինոդն, որով վիճակք Պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ են քառասուն և Հինգ: Սակայն թողեալ ասեմք զսոյն զայս անճշդութիւն, զոր գործէ Սինոդն ի թիւն թեմական առաջնորդութեանց Հայոց Տաճկաստանեայց, ո՞րով իրաւամբ արդեօք, կամ ո՞րով խորհրդով Սինոդն թէ ի 1866 ամի և թէ զայս նուազ զառաջնորդական վիճակս, որք կան ընդ անմիջական Հովուութեամբ Աթոռոցն Սոոյ, Աղթամարայ և Երուսաղէմի, ի բաց հանէ ի վիճակէ անտի ընդհանրական Հայրապետին Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ որ ի Տաճկաստան, վիճակ որ կախեալ կայ զՊատրիարքէն Կոստանդնուպօլսոյ առաջի Օսմանեան Պետութեան և

Ազգիս, ըստ իրաւանց փոխանորդութեան նորա Կաթողիկոսութեան ամենայն Հայոց.

Արդ՝ եթէ սոյն երեքին աթոռք թեմական վիճակօքն իւրեանց ենթարկեալ կան Պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ, և սա ինքն կայ ստորագասեալ Առաքելական Մեծի Աթոռոցն որ ի ս. Էջմիածին, ապա ուրեմն վիճակ կաթողիկոսութեան ամենայն Հայոց ի Տաճկաստան են Աթոռք առաջնորդականք Պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ և Երուսաղէմի, և կաթողիկոսութեանցն Սոոյ և Աղթամարայ: Յետինքս այսօրիկ կաթողիկոսութիւնք զիտէ ապաքէն Չերք Ամենապատուութիւն, թէ մասնականք են, և չկազմեն բնաւ ո՞չ անկախ թեմ և ո՞չ առանձին եկեղեցի, այլ մասն են և նոքա Եկեղեցւոյն Հայաստանեայց ընդ միով և եթ Հովուապետաւոր է Հայրապետն Ծայրագոյն Պատրիարքն Աբարատեան Մայր Աթոռոց Սրբոյ Էջմիածնի, և հոգևոր Տէրն և Կաթողիկոսն ամենայն Հայոց: Զի եթէ չէր այս այսպէս, ո՞ւր է միութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ, ի՞բր ճշգրտիցի տիտյաստանեայց եկեղեցւոյ, ի՞բր ճշգրտիցի փարախի Հովուապետութեան նորա գտանիցին: Եւ միթէ յաջորդն սրբոց Առաքելոց Թաղէի և Բարդուղիմեայ չհովուիցէ՞ այլ ևս զհօտն զոր ծնան նոքա ի Քրիստոս, և զորոց Աթոռն ժառանգեաց Լուսաւորիչն հոգւոց մերոց Տ. Սուրբ

Գրիգոր, աւանդելով զայն յաջորդացն իւրոց անուամբ և իրաւամբ Հայրապետութեան միոյ Սուրբ Կաթողիկէ և Առաքելական Եկեղեցւոյ Հայաստանեայց:

Ի նկատումն առեալ զայս ճշմարտութիւն Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովն Հայոց, որ ի Տաճկաստան, հրաւիրեաց ի 1866 ամի ի ձեռն հոգելոյս Պատրիարքին Կոստանդնուպօլսոյ Տեառն Պօղոսի Արքեպիսկոպոսի գաթոն Սսոյ, Աղթամարայ և Երուսաղէմի մասնակցել յայնժամ ընտրութեան նորոյ Կաթողիկոսին: Եւ արդարեւ աթոռքն այնոքիկ առաքեցին ի ժամանակին յայնմիկ փոխանորդս առանձինն, որք յանուն նոցա մասնակցեցան քուէարկութեան ի վիճակային համազումար ժողովի եկեղեցականաց, որպէս և յետոյ ուրեմն յԱզգային երեսփոխանական ընդհանուր ժողովի, առաջի առնելով զերեսին աթոռսն զայնոսիկ և զթեմական վիճակս նոցին: Այսու օրինակաւ ընտրութիւնն այն եղև յընդհանրութենէ անտի որդւոց Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ սփռելոց ի Տաճկաստան ի սահմանս իշխանութեան նորա:

Այս ամենայն պատմական իմն է եղելութիւն որ ծանօթ է Սինողիւ ի պաշտօնական տեղեկագրութենէ անտի հոգելոյս Պատրիարքին Կոստանդնուպօլսոյ Տեառն Պօղոսի Արքեպիսկոպոսի գրելոյ յանուն Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովոյն, որ ի 26 ամսեանն Օգոստոսի 1866 ամի, որ ոչ միայն գտանի ի Դիւանի

անդ Սրբոյ և Մեծի Աթոռոյդ, որպէս և ի Ղիւանս անդ Պատրիարքարանացն Կ. Պօլսոյ և Երուսաղէմի, և Աթոռոյն Սսոյ և Աղթամարայ, այլ և պատճէն նորա հրատարակեցաւ յԱրատ պաշտօնական ամսաթերթի ս. Աթոռոյդ ի թիւն ԺԱ.-րդ ամսեանն Նոյեմբերի 1883 ամի:

Յետ ճշգրտելոյ համառօտիւ զայս ամենայն՝ ասացուք նոյնպէս, թէ ընդէր Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովն Հայոց Տաճկաստանեայց սահմանեաց յետ հասուն և ազգաշահ խորհրդակցութեանց յառանձին գումարմունս իւր անդ Թ, Ժ, ԺԱ և ԺԲ.-րդ 1883 շրջանի ըստ եղանակի ընտրութեան 1866 ամի մասնակցել և յայս նորոգ ընտրութիւն կաթողիկոսական, որպէս կանխեցաք զրել առ Ամենապատուութիւն Ձեր ի 1-ամսեանն Յունուարի այսր ամի:

Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովն ի վերոյիշեալ գումարմունս իւր անդ վարեցաւ և պարտ էր վարել, ըստ նախորդ ժամանակին, յորում գրեալ էր արդէն առ Սինողն ասելով. «Տեսեալ (Ազգային ժողովն) զի ընտրական կարգադրութիւնս այս (առաջարկեալն յայնժամ ի Սինողէն ի 11 ամսեանն Սեպտեմբերի 1865 ամի) որ թերևս համաձայն իցէ կանոնաւորութեան Եկեղեցական վարչութեան մերազնէից Ռուսաստանեայց, այլ ոչ ի դէպ զայ բնաւին թուրքիարնակ Հայկազանցս քաղաքական վիճակի պարագայից, որք պահանջեն միայն

ի ձեռն պաշտօնական Գլխոյ Ազգին, այն է՝ Պատրիարքին Կոստանդնուպոլսոյ, և ընդ նորին նախագահութեամբ կարգեալ Ազգային կեդրոնական ժողովոյ, առնել պաշտօնական յարաբերութիւնս ընդ համայն համազգիս օտարաբնակս

Վասն որոյ և Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովն սահմանեաց զմասնակցութիւն թուրքիաբնակ Հայոցս ընտրութիւն Հայրապետին ամենայն Հայոց առնել ոչ ի վիճակաւորացն և ի ժողովրդականաց պատգամաւորս, և կամ՝ քուեայս առանձինն ընտրելով ըստ Սինոդիդ, որ նոր իմն է եղանակ ընտրութեան, և ոչ երբէք ի գործ եղեալ աստանօր ի մէջ մեր, այլ՝ զհամօրէն Տաճկաստանի և Դանուբեան աշխարհաց Հայորեարն ընդունել ի մասնակցութիւն ընտրութեան Հայրապետին ամենայն Հայոց ըստ կարգաց վաղնջուց և օրինաց Հայաստանեայց մի, սուրբ, Կաթողիկէ և Առաքելական Եկեղեցւոյ»:

Եւ արդարեւ վաղնջուց օրէնք և կարգ Հայաստանեայց Եկեղեցւոյ որ ի Տաճկաստան, ի մասնակցութիւն ընտրութեան Հայրապետին ամենայն Հայոց՝ եղեալ է այսպէս:

Աթոռն Պատրիարքութեան Կ. Պօլսոյ՝ հոգեւորական և աշխարհական ժողովովքն իւրովք համարեալ է առաջի Ազգին և Օսմանեան Պետութեան՝ ներկայացուցիչ Եկեղեցւոյն Հայաստանեայց համօրէն՝ որ ի Տաճկաստան: Այս այսպէս ընկալեալ է ի սկզբանց անտի հաստատութեան Աթոռոյ Պատրիարքութեան Հայոց որ ի

Կոստանդնուպոլիս, առանց բնաւ խնդիր անգամ լինելոյ ի թեմական առաջնորդութեանց եղելոց ընդ իրաւասութեամբ Պատրիարքական Աթոռոյն Կ. Պօլսոյ յանուն փոխանորդութեան Հայրապետին ամենայն Հայոց:

Յորժամ թուրքիաբնակ ազգն Հայոց ցանկացաւ, զի Ազգային ժողովքն և իշխանութիւն կանոնաւորեցին զբաւոր կանոնադրութեամբ ի ի 1860 ամի իմբազրեցաւ յայնժամ Սահմանադրութիւնն և վաւերացաւ ի 1863 ամի ի պետութենէն Օսմանեանց, և էանց ի կարգս և ի հատորս օրինաց և օրինազրոց Օսմանեան պետութեան:

Սոյն այս Սահմանադրութիւնն ոչ նորահնար ինչ է, այլ՝ իմբազրութիւն արտօնութեանց կարգաց և կանոնաց, որովք վարէր Պատրիարքութիւնն Կոստանդնուպոլսոյ ի սկզբանց անտի հաստատութեան իւրոյ:

Երրորդ յօդուած հիմնական սկզբանց Սահմանադրութեանն այնորիկ ասէ.

«Ազգին պարտականութիւնն է Հայաստանեայց Եկեղեցւոյ ղուանութիւնն եւ աւանդութիւններն անարատ պահել»: Վաթսուներորդ առաջներորդ տրամադրութեան Սահմանադրութեանս այսորիկ խօսելով զիրաւանց և զգումարմանէ Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովոյն տայ նմնս եւ նթ զիրաւունս մասնակցութեան ընտրութեան Հայրապետին ամենայն Հայոց՝ ասելով յերկրորդում պարբերութեան.

«Բ. (ընդհանուր ժողովը կը գումարի) Կաթուղիկոսի ընտրութեան մասնակից ըլլալու համար»։ Ըստ որում սոյն այս Ազգային երեսփոխանական ժողով ընդ նախագահութեամբ Պատրիարքին Կ. Պօլսոյ, որպէս կանխեցաք ասել, է միակ և օրինաւոր ներկայացուցիչ ամենայն թեմական վիճակաց եղելոց ընդ իրաւասութեամբ Պատրիարքութեան Կ. Պօլսոյ և Երուսաղէմի, և մասնական կաթուղիկոսութեանցն Սսոյ և Աղթամարայ առաջի Պետութեան Օսմանեան և Ազգին:

Արդ՝ ոչ եթէ, որպէս կարծեն ոմանք, Սահմանադրութիւնն է որ ետ զայս իրաւունս Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովոյն ճասկաստանեայց, այլ ի չորից և աւելի դարուց հետէ այս իրաւունք էին Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովոյն կազմելոյ ընդ նախագահութեամբ Պատրիարքին Կ. Պօլսոյ ի բարձրաստիճան և յայլ եկեղեցականաց մայրաքաղաքիս, որպէս և յամիրայից և յաւագ արհեստաւորաց (էսնաֆ): Սահմանադրութիւնն՝ ընտրական և եթ արար զայս Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողով, որով և առաւել ևս արժանացաւ նա լինել օրինաւոր ներկայացուցիչ Ազգին, ըստ որում մէն մի անդամք նորա թէ՛ եկեղեցականք և թէ՛ աշխարհականք ընտրեալք են իբրև պատգամաւորք, եկեղեցականքն՝ յեկեղեցական կարգէ, և աշխարհականքն՝ յաշխարհական դասէ: Եւ մինչ ի հնումն անդ Ազ-

գային երեսփոխանական ընդհանուր ժողովի, որ յառաջ քան զՍահմանադրութիւնն, անդամք էին նշանաւոր Պօլսեցի Հայք և եթ, այժմ շնորհիւ Սահմանադրութեան ոչ միայն մէն մի արուարձան Կ. Պօլսոյ, այլ և իւրաքանչիւր թեմական վիճակ ընտրէ զիւր երեսփոխանս, և առաքէ յանդամակցութիւն Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովոյն, որով ի Կեդրոնական մեծի ժողովին յայնմիկ ներկայանան ամենայն թեմական վիճակք ի ձեռն պատգամաւորաց ընտրելոց ժողովրդական քուէարկութեամբ:

Ահա տեսանի յայտնապէս, զի Ազգային այս երեսփոխանական ընդհանուր ժողով ի վաղեմի բազմադարեան իրաւանց ունի կատարելապէս իրաւունս մասնակցելոյ յընտրութիւն ընդհանրական Հայրապետին Արարատեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի յանուն և ի զիմաց ամենայն Հայոց եղելոց ընդ իրաւասութեամբ Պատրիարքութեան Հայոց Կ. Պօլսոյ: Զսոյն զայս անբռնաբարելի իրաւունս իւր գործադրեալ է ցարդ Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովն այն մեծ ոչ միայն յառաջ քան զՍահմանադրութիւն թուրքիաբնակ Հայոց, և նախ քան զՊալատէնիայն Ռուսահայոց, այլ և յետ հաստատութեան երկոցուն ևս Կանոնադրութեանց, բաց աստի՝ զսոյն զայս իրաւունս Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովոյն ոչ միայն ընկալեալ է տէրութիւնն Օսմանեանց, այլ և նոյնինքն պետութիւնն ամենայն Ռուսաց, զի Պատ-

բիարքութիւնն Կ. Պօլսոյ այսու օրինակաւ և եթմասնակցեալ է ընտրութեան կաթողիկոսաց նոյն իսկ յաւուրս Պալատէնիայի:

Արդէն Չերդ Ամենապատուութիւնն որ անձամբ իսկ իբրև հրաւիրակ Ս. Աթոռոյն ի 1858 ամի գտաւ ի Մայրաքաղաքիս, զիտել զիտէ զայս ամենայն, որպէս և զանցս, որ անցին ի ժամանակի անդ ընտրութեան Տեառն Տեառն Գէորդայ չորրորդի երջանկայիշատակ Կաթողիկոսի ամենայն Հայոց:

Արդ՝ կարգադրութիւնն՝ զոր հաղորդէ մեզ Սինոդն զեղանակէ ընտրութեան Հայրապետին ամենայն Հայոց, եթէ օրինաւոր և գործադրելի իսկ համարիցի ի Ռուսաստանեայց Հայոց, սակայն ոչ բնաւ ի դէպ զայ վարչական զրութեան թուրքիարնակ Հայոցս, զոր ընկալեալ ունիմք ի դարաւոր ժամանակաց հետէ:

Ահա ի վերայ հիմանցս այսոցիկ եղև վերջնական վճիռ Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովոյն, զոր ի վեր անդր յիշեցաք, և որպէս ցուցաք, կարծեմք թէ ոչ նոր ինչ է վրձիռն, ոչ նորագիւտ կանոն, և ոչ շորթումն իրաւանց թեմական առաջնորդութեանց հոգևորականաց և ժողովրդականաց, այլ՝ շարունակութիւն օրինաց և կանոնաց, որովք վարեալ է միշտ Պատրիարքական Աթոռն Կ. Պօլսոյ ժողովովն իւրով ի մասնակցութիւն ընտրութեան անդ Կաթողիկոսի ամենայն Հայոց յանուն և

ի զիմաց համօրէն առաջնորդութեանց թուրքիարնակ Հայոց:

Աւարտ տամք ուրեմն պատասխանազրոյ մերում այսմիկ որ գրեցաւ խորհրդակցութեամբ Կաթողիկոսական Յանձնաժողովոյն, և ըստ վրձնոյ Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովոյն, ծանուցանելով Չերումը Ամենապատուութեան և պատուական Սինոդիդ, թէ՛ ըստ գրելոյ մեր առ Բարձր Սրբազնութիւն Չեր ի 1 ամսեանն Յունուարի այսր ամի, և զայս նուագ Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովն մասնակցեսցի ընտրութեան Կաթողիկոսին ամենայն Հայոց ըստ հնաւանդ եղանակի 1866 ամի: Եւ արդէն իսկ ըստ այնմ ձեռնամուխ եղեալ է մեր ընտրական գործողութեանց, և չկարեմք մեր ընտրական զործողութիւնս ընտրական օրիփոփոխել զտրամադրութիւնս ընտրական օրինաց մերոց, զի չէ մեզ մարթ օտար իմն եղանակաւ գալ ի մասնակցութիւն ընտրութեան Կաթողիկոսին ամենայն Հայոց:

Աներկբայ իսկ եմք, Սրբազան Տէր, զի յասացելոցս յայսցանէ քաջ իսկ խելամուտ լինիցի Չերդ Ամենապատուութիւն, որպէս և Սինոդն պատուական, եթէ ոչ այլ ինչ ունիմք մեք ի կէտ նպատակի, բայց եթէ զօգուտ համօրէն Սզգին, որպէս և զմիութիւն, զշինութիւն և զազատութիւն Ուղղափառ և Սուրբ Եկեղեցւոյս Հայաստանեայց: Ի սոյն վախճան ոչ այլով իւրք օրինակաւ կարեմք մեք հասանել, բայց եթէ պինդ ունելով զկանոնս և զաւանդութիւնս, որոց

պատկառ կացին Հարք մեր, և որոց պարտ է և մեզ հեռատես ոգևով մնալ հաւատարիմ:

Մնամ եղբայրանուէր ողջունիւ Սիրոյ ի Քրիստոս Յիսուս ի Յոյսն մեր ամենեցուն

Աղօթակից եղբայր

Նախագահ Ազգային Երեսփոխանակաց Ընդհանուր Ժողովոյ Հայոց Տանկասանեայց

Ն Ե Ր Մ Է Ս Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս

Ի 11 ամսեանն Փետրուարի յամի Տեառն 1884, և յազգական թուականի ՌՅԼԳ. ի Պատրիարքարանի Հայոց Կոստանդնուպոլսոյ թ. 220.

Ասեմապետ՝ Քրիստոսուր Ղազարոսեան

Ասեմաղայի՝ Յակոբ Դուրգէնեան



Տեղակալ Մակար արքեպիսկոպոսն սոյն թուղթը նոյն թուի Փետրուարի 27-ին ստանալով՝ յանձնում է հետեւեալ օրը Սինօզին՝ մակազրելով այսպէս. «Յանձնեմք ի հեռատես խորհրդածութիւն Սինօզի ս. էջմիածնի» *):

*) Գործ Սինօզի 1883 № 137, էջ 177—186:

Կ. Պօլսի Պատրիարք վարժապետեանը ստանում է էջմիածնի միաբանութեան թուղթը: Պօլսի կրօնական ժողովը՝ առանձին խորհրդակցութեան առնելով այդ թուղթը, հեռագրում է Սինօզին հետեւեալը. «Այսօր (3 Ապրիլի 1884) Թուրքիայի բոլոր վիճակները ներկայացնող Ազգային ժողովն ընդունեց կաթողիկոսական Յանձնաժողովի առաջարկած նոր կարգը, որով այժմ նախաժողովի առաջարկած է 1866-ի ընտրութեան եղանակը: Թուրքիայի հայերը կը ներկայացնեն երեք ընտրելիներ իրանց ստացած ձայներով՝ համաձայն Ձեր միաբանութեան ցանկութեանը *): Ահաւասիկ ընտրուած կանգիդատները՝ Ներսէս Պատրիարք 62 ձայն, Խրիմեան 50, Մելքիսեղեկ 42»: Ստորագրել է. Խորէն Արքեպիսկոպոս՝ Նախագահ Կրօնական Կենդր. Ժողովոյ:

Այդ միջոցներում Սինօզում ստացւում է Կովկասի կառավարչապետի 23 Մարտի 1884 թ. 2913 համարով գրութիւնը՝ Ներսէս Պատրիարքի Սինօզին ընտրութեան մասնակցելու եղանակի մասին գրած թղթի առթիւ, որի թարմանութիւնն առաջ ենք բերում այստեղ:

*) Միաբանութեան թղթից ինչպէս տեսանք՝ ընդհակառակն նրանք ուզում են որ բոլոր պատգամաւորներն անձամբ ներկայ լինեն ընտրութեան և ոչ թէ ներկայացուցիչներ ուղարկելով:

«Էջմիածնի Հայ-Լուսաւորչական Սինօզին» Անցեալ Փետրուարի 27-ին Հայ Լուսաւորչական Պատրիարք Կաթողիկոսի առաջիկայ ընտրութեան գործի առթիւ Պետերբուրգում իմ մասնակցութեամբ կայացած առանձին խորհրդակցութեան օրագիրը ներքին գործոց նախարարն ամենահպատակօրէն՝ զեկուցանելով՝ Կայսրն այս Մարտի 13-ին ԲԱՐՁՐԱԳՈՅՆՍ քարեհաճեց հրամայել.

1. Յայտնել Կ. Պօլսի ներսէս Պատրիարքին՝ թէ կառավարութիւնս մնում է հաստատուն իւր որոշման, որ Էջմիածնում ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջիկայ ընտրութեան ժամանակ ճշտութեամբ պահպանուեն մեր օրէնքի բոլոր առաջադրութիւնները, և թէ այդ նկատմամբ չի թոյլատրուիլ ոչ մի բացառութիւն կամ զիջողութիւն: Եւ որովհետեւ գոյութիւն ունեցող կանոններով (յօդ. 917, 918 մ. I հատ. XI օրինաց) ընտրութեան ժամանակ պահանջուում է իւրաքանչիւր թեմի մասնակցութիւնն առանձին, ուղարկելով պատգամաւորներ (երկու) կամ հասցնելով Սինօզին զբաւոր կարծիք իրենց ընտրելի կաթողիկոսական թեկնածուի մասին, ուստի հէնց այժմ յայտնել ներսէս Պատրիարքին, որ եթէ Ազգային ժողովի պատգամաւորները գան Էջմիածին կաթողիկոսական ընտրութեան՝ այդպիսիները համեմատ օրէնքի ճիշտ մտաց՝ պէտք է ճանաչուեն ինչպէս ներկայացուցիչներ միայն Կ. Պօլսի

թեմի, ունենալով ընտրութեան երկու ձայնի իրաւունք:

2. Յանձնարարել Կ. Պօլսի մեր դեսպանութեան՝ որ այնտեղ գտնուած Էջմիածնի Սինօզի երկու Ծանուցողական հրովարտակներից—Սսի և Աղթամարի Պատրիարքների անունով—պահել առաջինը, իսկ երկրորդն անմիջապէս իրենից ուղարկել ըստ պատկանելոյն Աղթամարի Պատրիարքին, միևնոյն ժամանակ պաշտօնապէս յայտնել Կ. Պօլսի Պատրիարքին, որ կատարելով Սինօզի խնդիրը, կառավարութիւնս իրեն բոլորովին հեռի է պահում Տաճկաստանի Հայոց վիճակների հերարխիական յարաբերութեանց մէջ որ և է կերպ միջամտելուց:

Այսպիսի ԲԱՐՁՐԱԳՈՅՆ կամքի մասին պատիւ ունիմ հաղորդել Էջմիածնի Սինօզին ի տեղեկութիւն և ի հրահանգութիւն, յարակցելով՝

Ա. Որ Սսի Պատրիարքի անունով Ծանուցողական հրովարտակի պահելն եղել է այն նրկատմամբ, որ պաշտօնական ճանապարհով մեզ հասել է տեղեկութիւն՝ թէ նա չէ ճանաչում Էջմիածնի Դահի գերիշխանութիւնը Կիլիկիայի Հայոց եկեղեցու վրայ, և չէ կամենում մասնակցել Էջմիածնի առաջիկայ կաթողիկոսական ընտրութեան:

Բ. Որ կառավարութիւնն կատարելապէս հաւանում է գործողութեան այն եղանակին, որին այսօր Սինօզը հետևել է յիշատակեալ ընտրութիւնների առթով և հաւատացած է, որ Սինօզն

իւր հետագայ գործառնութեանց մէջ ճիշտ կերպով պէտք է հրահանգուի 1836 թ. Կանոնադրութեամբ (Պօլօժենիա) Լուսաւորչական Հայոց եկեղեցու շահի և Աթոռի նշանակութեան համար:

Գեներալ Ադիւտանտ իւխան — Դօնդուկով-Կարսակով.

Բերուժ ենք այստեղ յիշեալ Թղթի բնագիրը նոյնութեամբ.

Չմիածինսկոյ Արмяնո-Գրիգորիանսկոյ
Синоду.

По всеподданнѣйшему представленію Министромъ Внутреннихъ Дѣлъ журнала Особаго Совѣщанія, состоявшагося въ С-Петербургѣ при моемъ участіи, 27 минувшаго Февраля, по дѣлу о предстоящихъ выборахъ Армяно-Григоріанскаго Патріарха Католикоса, *Государь Императоръ*, въ 13 день сего Марта, Высочайше соизволилъ повелѣть.

1, Объявить Константинопольскому Патріарху Нерсесу, что Правительство остается при принятомъ рѣшеніи, чтобы на предстоящемъ въ Чмιάдзинѣ избраніи Католикоса всѣхъ Армянъ въ точности были соблюдаемы всѣ предписанія нашего закона и что въ этомъ отношеніи не

могутъ быть допущены никакія изъятія или послабленія. А такъ какъ дѣйствующими правилами (ст. 917 и 918 ч. I т. XI Св. Зак.) при выборахъ требуется участіе каждой епархіи отдѣльно, чрезъ присылку депутатовъ (двухъ) или письменнаго заявленія Чмιάдзинскому Синоду объ избираемыхъ ими кандидатахъ въ Католикосы, то объявить нынѣ же Патріарху Нерсесу, что въ случаѣ прибытія въ Чмιάдзинъ на выборы депутатовъ Константинопольскаго Народнаго Собранія, таковыя, на точномъ основаніи закона, будутъ признаны лишь какъ представители одной Константинопольской епархіи, съ правомъ на подачу только двухъ избирательныхъ голосовъ;

2. Поручить Посольству нашему въ Константинополь изъ хранящихся въ ономъ двухъ извѣстительныхъ грамотъ Чмιάдзинскаго Синода на имя Патріарховъ Сиссаго и Ахтамарскаго первую задержать, а вторую отправить непосредственно отъ себя, по назначенію Ахтамарскому Патріарху, но при этомъ заявить официально Константинопольскому Патріарху, что исполняя просьбу Синода, правительство совершенно устраняетъ себя отъ всякаго вмѣшательства въ іерархическія отношенія Армянскихъ епархій въ Турціи.

О таковой Высочайшей волѣ имѣю честь сообщить Чмιάдзинскому Синоду для свѣденія

и руководства, присовокупляя, а) что задержка грамоты на имя Сисскаго Патріарха послѣдовала въ виду полученныхъ официальнымъ путемъ свѣдѣній, что онъ не признаетъ главенства Эчмиадзинскаго Престола надъ Армянскою Церковью въ Киликіи и не желаетъ принять участія въ предстоящихъ выборахъ Эчмиадзинскаго Католикоса, и б) что Правительство воплиѣ одобряетъ образъ дѣйствій, котораго держится до сихъ поръ Синодъ по поводу означенныхъ выборовъ, и увѣрено, что въ интересахъ Армяно-Григоріанской Церкви и значенія Эчмиадзинскаго Престола Синодъ будетъ въ дальнѣйшихъ своихъ дѣйствіяхъ руководствоваться строго Положеніемъ 1836 года.

Генералъ-Адъютантъ Блязъ

Дондуковъ-Карсаковъ.

За Директора,

Вице Директоръ Ропе

(*Գործ Սինոզի 1882 թ. № 137.*)

Կովկասի Կառավարչապետի յիշեալ թուղթը Սինոզը լսելով իւր 1884 թ. 16 Ապրիլի օրագրական վճռով որոշում է հրահանգուել այդ թղթի իմաստով, միևնոյն ժամանակ տեղեկութիւն տալով Կառավարչապետին Կ. Պօլսի Հայոց Կենդրոնական Ժողովի հեռագրի մասին երեք կաթուղիկոսական թեկնածուների նկատմամբ:

Կովկասի Կառավարչապետն իւր 23 Ապրիլի 1884 թիւ 3737 համար գրութեամբ յայտնում է Սինոզին, թէ Կ. Պօլսի Ազգային Ժողովի որոշումը կաթուղիկոսական երեք թեկնածուների նկատմամբ ըստ օրինի պէտք է ընդունուեն իբրև Պօլսի Հայոց վիճակի կարծիք, համաձայն օրինաց էջմիածնում Պատրիարք-Կաթուղիկոսի ընտրութեան ժամանակ պէտք է ունենան երկու ձայնի նշանակութիւն, եթէ էջմիածին չզան բուր պատգամաւորները և կամ չուղարկեն իրենց գրաւոր կարծիքը: Սոյն թղթի իմաստը նոյնն է՝ ինչ որ վերև առաջ բերուած 23 Մարտի 2913 համարով թուղթը:

Այս բոլորից յետոյ ներսէս արքեպ. Վարժապետեանն իւր 16 Ապրիլի 1884 համար 240 գրութեամբ ուղարկում է Տեղակալ Մակար արքեպիսկոպոսին Պօլսի Հայոց Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովի ամենայն Հայոց Հայրապետի ընտրական գործողութեանց տեղեկագիրը, որի պատճէնը բերում ենք այստեղ, որպէս զի ընթերցողը ճիշտ գաղափար կազմի՝ թէ ինչպէս է գումարուում երեսփոխանական ժողովը, ինչ ձևով է արտայայտուել տաճկահայոց թեմերի մասնակցութիւնը կաթուղիկոսական ընտրութեան, ինչ եղանակով է կատարուել եռանուն ցանկը կաթ. թեկնածուների, ո՞վքեր են մասնակցել այդ ժողովին, ինչպիսի պահանջներ է արել ժողովը էջմիածնից կաթ. ընտրութեան առթիւ և այլն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ի ր *)

ՂնՏրական գործողութեանց Ազգային Երեսփոխանական ընդհանուր ժողովոյ Հայոց Օսմանեան պետութեան վասն ընՏրութեան Հայրապետի ամենայն Հայոց՝

Առ Ամենապատիւ Տէր Մակար Սրբազան Արքեպիսկոպոս արժանընտիր Տեղակալ Կաթողիկոսութեան ամենայն Հայոց եւ

Առ Գերապատիւ խորհրդական Անդամս Սինդիկն Արատեան Առաքելական Մայր Աթոռոյ Կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի՝ եւ

Առ Համազգային ընտրողական ժողովն յընտրուծիւն ամենայն Հայոց,

Ըստ սահմանելոյ Ազգային Երեսփոխանական ընդհանուր ժողովոյ՝ որպէս կանխեցաք զրել յառաջներորդում աւուր ամսեանն Յուլուարի ընդ համարաւ 190, և ի մետասաներորդում աւուր ամսեանն Փետրուարի այսր ամի ընդ համարաւ 220, հրաւիրեցաք զամենայն հեռաբնակ վիճակաւորս, զանպաշտօն եպիսկոպոսունս՝ որ ի դաւառս, և զվանահարս՝ որոց իցէ միաբանութիւն, նոյնպէս և զմերձաւորս

*) Գործ Սինդիկ 1882 թիւ № 137 էջ 309.

վիճակաւորս՝ դալ ի մասնակցութիւն քուէարկութեան առ ի պատրաստել զեօթնանուն ցուցակ Կաթողիկոսական ընտրելեաց, նշանակեալ ի հրաւիրագիրս անդ, թէ յերկոտասաներորդում աւուր ամսեանն Մարտի զուամբելոց է եկեղեցական Համագումար ժողով ի պատրաստութիւն ցանկի ընտրելեաց:

Ի վերոյնշանակեալ յերկոտասաներորդում աւուր նոյն ամսոյ զուամբեցաւ եկեղեցական Համագումար ժողով յաւագ եկեղեցոջ Կոստանդնուպօլսոյ, և յամենայն հրաւիրելոց աստի յայսցանէ Ամենապատիւ Սրբազան Պատրիարքն Ս. Երուսաղէմի, որ յաւուրս յայտոսիկ դտանի ի մայրաքաղաքիս, և ներկայացուցիչն Տանն Աղթամարայ անձամբ մասնակցեցան, և ինն և տասն հեռաբնակ վիճակաւորք որք են՝ Վանայ, Քարբերդի, Ակնայ, Տրապիզոնի, Եւզոկիոյ, Երզնկայի, Եդեսիոյ, Կեսարիոյ, Կուտինայ, Չարսանձագի, Չմշկաճագի, Շապին-Գարահիսարի, Պաղդատի, Բասենու, Պայազիտի, Չնքոյ, Պելէճիկի, Սղերդի և Կիպրոսի, և անպաշտօն եպիսկոպոսունք, որք են՝

- Գեր. Տ. Երեմիա ս. եպ. Տ. Սահակեան
- » » Երեմիա ս. » Տ. Սարգսեանց
- » » Յարութիւն ս. եպ. Վեհապետեան
- » » Աստուածատուր ս. եպ. Տ. Յովհննանց.
- » » Յակոբ ս. եպ. Խիզանցի

և ի վանահարց՝ որոց գոյ միաբանութիւն չորեքին և եթ, այն է՝ Կտուց Անապատի, Մակա-

բայեցուց, Բարձրահայեաց և Ածպտերի վանուց, սոքա ամենեքեան զրութեամբ ետուն զքուեայս իւրեանց վասն ցուցակի ընտրելեաց: Իսկ մերձաւոր վիճակաւորք որք են՝ Աղբիւնուպօլսոյ, Զմիւռնիոյ, Պրուսայի, Ռոտոսթոյի և Նիկոմիդիոյ, և վանահայրն վանուց Արմաշու, որպէս նաև վիճակաւորքն Կարնոյ, Տարօնոյ, Արաբկերու և Գաղատիոյ, նոյնպէս և եօթն եպիսկոպոսունք՝ որ են

- Գեր. Տ. Գրիգոր ս. եպ. Տ. Պօղոսեան
- » » Սիմէոն ս. » Աէֆերեան
- » » Խորէն ս. » Նարպէյ
- » » Մեսրոպ ս. » Սուքիասեան
- » » Մատթէոս ս. եպ. Իզմիրլեան
- » » Տիմոթէոս ս. եպ. Սափրիչեան
- » » Յարութիւն ս. եպ. Յովհաննէսեան

որք արդ ի մայրաքաղաքիս են, քարոզիչ վարդապետք, աւագ և աթոռակալ քահանայք ամենայն եկեղեցեաց Կոստանդնուպօլսոյ, որոց ամենեցուն թիւ յանդեցաւ մինչ ցիննսուն և վեց, անձամբ մասնակից եղեն նոյն քուէարկութեան:

Թէ ի գումարման աստ յայսմիկ, և թէ յերկրորդում գումարման եկեղեցական Համագումար ժողովոյ, որ յինն և տասաներորդում աւուր ամսեանն Մարտի, ի վերայ ընդհանուր ցուցակի եպիսկոպոսաց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, որոց եհաս թիւ ի վաթսուն և եօթն. ի նոյն վաթսուն և եօթանց անտի եպիսկոպոսաց ի կրկին գումարմունս անդ գաղտնի քուէ-

արկութեամբ որոշեցան եօթանքին արժանաւորադոյնք ի գահակալութիւն Արարատեան Գերագահ Աթոռոյն, որոց անուանքն են ըստ առաւելութեան քուէեայց

1. Ամեն. Տ. Ներսէս ս. Արքեպիսկոպոս Պատ. Կ. Պօլսոյ քուէ 63
2. Ամեն. Տ. Մակար ս. Արքեպ. տեղապահ Հայրապետութեան Ամենայն Հայոց . . . 53
3. Գեր. Տ. Մելքիսեղ ս. եպիս. Առաջնորդ Զմիւռնիոյ 51
4. Գեր. Տ. Մատթէոս ս. եպիս. Իզմիրլեան քարոզիչ Նոր թաղի Իւսկիւտարի 48
5. Ամեն. Տ. Եսայի ս. Արքեպ. Պատրիարք ս. Երուսաղէմի 39
6. Ամեն. Տ. Մկրտիչ ս. եպիս. Խրիմեան վանահայր Վարազայ վանուց 38
7. Գեր. Տ. Խորէն ս. եպ. Աշրքեան Արմաշու վանուց 35

Սոյն այս ցուցակ եօթն ընտրելեաց ստորագրեալ յամենայն անդամոց եկեղեցական Համագումար ժողովոյ՝ ներկայացաւ Ազգային Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյն:

Ազգային Երեսփոխանական Ընդհանուր ժողովն գումարեցաւ ի նմին աւագ եկեղեցւոջ Կոստանդնուպօլսոյ՝ յերկրորդում աւուր ամսեանն Ապրիլի, և յառաջ քան զընտրական գործառնութիւն ի նկատումն էառ զառաջարկ Կաթողիկոսական Յանձնաժողովոյ, որ վասն

եղանակի մասնակցութեան Հայոց Օսմանեան պետութեան, յընտրութիւն Հայրապետի ամենայն Հայոց, և յետ խորհրդակցութեանց ընկալաւ զառաջարկ Կաթուղիկոսական յանձնաժողովոյն՝ որոյ բարեփոխեալ զեղանակ ընտրութեան 1866 ամի՝ ճշդեաց զայն մասն ընտրողութեան, զորմէ և սրբազումար միաբանութիւնդ ակնարկէր զբութեամբ իւրով որ յառաջներորդում ամսեանն Փետրուարի տարւոյս:

Ահաւասիկ որոշողութիւն Ազգային Երեսփոխանական Ընդհանուր Ժողովոյն:

«Ազգային Երեսփոխանական Ժողովն Հայոց Տաճկաստանեայց ի միջոյ ցանկի քուէարկելոյ նախապէս ի Համագումար Եկեղեցական Ժողովոյ Հայոց Թուրքիոյ յանուն առաջնորդական վիճակացն Հայոց եղելոց ընդ իրաւասութեամբ Պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ՝ կընտրէ միակ քուէարկութեամբ Երեք ընտրելի եպիսկոպոս ի Կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց»:

«Այս եղանակաւ պատրաստեալ եռանուն ցանկը կը դասակարգուի ըստ թուոյ քուէից, և առաջի անուան իւրաքանչիւր ընտրելոյն կը նշանակուի թիւ քուէիցն զոր ստացաւ»:

«Եկեղեցին Հայոց որ ի Տաճկաստան, ըստ որում կազմէ զմեծամասնութիւն Ազգին Հայոց, պահանջած է, և կը պահանջէ իրաւամբ որ իւր եռանուն ցանկն ամբողջապէս և նշանակութեամբ քուէից ընտրելեացն մտանէ ի քուէտուփն քուէ-

արկութեան, որ կը կատարուի ի Կաթուղիկէ Տաճարի Սրբոյ Էջմիածնի»:

«Այն ընտրելին՝ որոյ յԱզգային Ժողովին ստացած քուէից վրայ բարդուելով Ռուսաստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց քուէայքն կըստանայ զմեծամասնութիւն քուէից, նա է ընտրեալ Հայրապետն և Կաթուղիկոս ամենայն Հայոց»:

«Պատրիարքն Կ. Պօլսոյ պատրաստեալ զեռանուն ցանկ ընտրելեաց հազորդէ առ Տեղապահն Արարատեան Մայր Աթոռոյ ի ձեռն առանձին պատուիրակի՝ պաշտօն տալով նմա ներկայ գտանել, և ընտրական զործողութեանց վերոյնշանակեալ պայմանաց մէջ, մասնակցել յանուն Հայոց Տաճկաստանեայց»:

Եւ ապա Ազգային Երեսփոխանական Ժողովն մասնակցութեամբ Ամեն. Սրբազան Պատրիարքին Ս. Երուսաղէմի և ներկայացուցին Տանն Աղթամարայ, և իննսուն և ինն երեսփոխանաց, յորս էին և երեսփոխանք Կիլիկիոյ, քուէարկեաց զերիս ընտրելի եպիսկոպոսունս յընտրելեաց ցանկէ անտի քուէարկելոյ յեկեղեցական Համագումար Ժողովի անդ, և եւք քուէարկութեանն նշանակեցին զհետագայս, որ են

1. Ամեն. Տ. Ներսէս ս. Արքեպ. Պատրիարք Կ. Պօլսոյ քուէ 62
2. Ամեն. Տ. Մկրտիչ ս. Արքեպ. Խրիմեան. 50
3. Գեբ. Տ. Մելքիսեդ ս. եպ. Մուրադեան. 42

Այս են ահա արդիւնք դորձոց Ազգային
Երեսփոխանական Ընդհանուր Ժողովոյն, և ա-
նուանք երկց ընտրելեաց, զորս նոյն Ժողովն
ի դիմաց ամենայն Վիճակաց Օսմանեան պետու-
թեան Սրբազումար Ընտրողական Ժողովոյ Ս.
Էջմիածնի ըստ պարունակութեան և զօրու-
թեան վերոյիշատակեալ որոշման:

Տէրն մեր Յիսուս Լայն (քարեմադ-
թուծիւն):

Մնամ Ամենապատիւ Սրբազնութեան Ձերում
աղօթակից եղբայր

Ներսէս Արեւայիսկոպոս (Վարժապետեան)

16 Ապրիլի 1884

Ի Պատրիարքարանի Հայոց
Գոստանդնուպօլսոյ.



«Ազգային գրադարան»



NL0156380

